

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

ԴԵԳԻԵԳԱԾՈՒ

ديجيدو

Հրատարակութիւն Գահիրէի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ՏԵԼԵՎԻՏՈՒ

Պաշտոնաթերթ Գահիրեի
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության
Հեռաձայն: 22916444 - 24151127 - 24152478
Հեռապատճեն: 22916916

DIEGHIEGADOU

Periodical published by
Armenian General Benevolent Union - Cairo
Tel.: 22916444 - 24151127 - 24152478
Fax: 22916916
e-mail: agbucairo@gmail.com
www.agbuegypt.com

ديغيجادو

نشرة دورية
لجمعية القاهرة الخيرية الأرمنية العامة
ت: ٢٤١٥٢٤٧٨ - ٢٤١٥١١٢٧ - ٢٢٩١٦٤٤٤
فاكس: ٢٢٩١٦٩١٦

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ՑԱԻԱԿՑԱԳԻՐ

ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ –

Պր. Պերճ Թերզեանի դասախօսութիւնը

ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԷՆ –

Նայիրի Համբիկեանի Դասախօսութիւնը

AVC-Ի ԵՐՐՈՐԴ ՅՈՒՆԶՔԸ

ԶՐՈՅՑ AVC-Ի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ԵՒ

ԴԱՍԱՏՈՒՆԵՐՈՒՆ ՀԵՏ

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ –

Դոկտ. Անդրանիկ Տազեանի դասախօսութիւնը

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

ՎԱԻԵՐԱԳՐԱԿԱՆ – 14 ԲԱՑԻԿՆԵՐ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՅԱՇԱՐՔԸ

ԽՄԲԱԳԻՐ

Մարուշ Երամեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

Տոքթ. Վիգէն Ճիգմեճեան

ՍՐԲԱԳՐԻՉ

ՎԵՐՍՏՈՒԳԻՉ

Անայիս Ճիգմեճեան

ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ

ԶԵԽԱՌՐՈՒՄ

Շահէ Լուսարարեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Nubar Digital

Գահիրեի ՀԲԸՄ-ի

լուրերուն հետեւեցէք

www.agbuegypt.com

կայքէջով:

Ծանօթացէք «Հայաստան

էւ Հայերը Արաբական

Մամուլին մէջ. 1876-1923»

կայքէջի սիւթերուն

www.arminmedia.com

կայքէջով:

Թիւ. 84 Նոր Շրջան

ՅՈՒՆԻՍ 2017



ԼԵԶՈՒԻՆ ԴԵՐԸ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

Արդէն ամառ է. ամէն մարդ անհամբեր է հեռանալու քաղաքէն, աշխատանքի շրջապատէն, պարտաւորութիւններու եւ պարտականութիւններու մթնոլորտէն, եւ հասնելու երազած հանգիստին:

Սակայն կան աշխատանքներ, որոնք դադար չունին, ինչպէս մեր ամենէն կարելոր օրկաններէն սիրտը, ուղեղը, թոքերը եւ մնացեալը: Ասոնցմէ ուղեղն է սակայն որ իրապէ՛ս հանգիստ չունի եւ մեզի ալ հանգիստ չի տար, քունի պահուն իսկ երազներ կ'այցելեն մեզի, կամ մտահոգութիւններ թոյլ չեն տար որ քունը մօտ գայ:

Ո՞ր լեզուով կը տեսնենք մեր երազները. մտածե՞ր ենք: Հաւանաբար մեծամասնութեան համար, մանաւանդ անոնց, որոնք արդէն սկսած են թեւակոխել հասունութեան տարիքը, այս հարցումը կրնայ անիմաստ եւ անտեղի թուիլ. բայց չէ՛:

Բարեկամուհիներէս մէկուն իրլանտացի ամուսինը յաճախ կ'ըսէր.

-Այն պահուն որ կիսս կը սկսի իր բարկութիւնը հայերէնով արտայայտել, կը գիտնամ որ ՇԱՏ բարկացած է եւ պէտք է սպասեմ իր հանդարտելուն:

Ուրեմն մեր ենթագիտակցութեան խորերը տեղ մը ամբօրէն նստած է այս լեզուն եւ ամենէն անհաւանական պահերուն կը ժայթքի:

Արդեօ՞ք նոյնն է պարագան երիտասարդներուն, մանաւանդ պատանիներուն համար:

Երբ աշակերտ մը պարզօրէն կ'ըսէ, առանց դոյզն անհանգստութեան.

-Բայց ի՞նչ պիտի ընեմ հայերէնը, դպրոցէն ետք, համալսարանի թէ գործի մէջ ԲՆԱԻ հայերէնին պէտք պիտի չունենամ:

Մենք կրնանք, պէ՛տք է մեր հանգիստը կորսնցնենք, որովհետեւ պէտք է գտնենք թէ ի՞նչ է այսօր հայերէնին դերը մեր կեանքին մէջ: Առանց անոր մեր բոլոր ճիգերը կրնան ապարդիւն ըլլալ:

Ի՞նչ է մեր լեզուին ԴԵՐԸ այսօր, մեզի համար:

Ասիկա հարցադրում մըն է, որ կրնայ դիւրին պատասխաններ չունենալ, կրնայ

պատասխաններ ունենալ, բայց զորս գտնելու համար շատ ժամանակի կարիք ունենանք:

ԱՄՆԻ հայկական գաղութներէն մինչեւ Իսթանպուլ եւ Ֆրանսայի տարբեր քաղաքները, Միջին Արեւելք եւ այլուր, մեր տղաքը իրարու հետ այլ լեզուներով կը հաղորդակցին:

-Հապա որո՞ւ հետ հայերէն կը խօսիս:

-Մեծ մօրս. կ'ուզէ որ իր հետ մի՛շտ հայերէն խօսիմ:

-Ինչո՞ւ:

-Չեմ գիտեր:

Բարեբախտաբար Սփիւռքի մէջ ակումբները կը շարունակեն մեր առօրեային կեդրոնը մնալ. ակումբ կ'երթանք իրարու հանդիպելու համար, ակումբ կ'երթանք, որովհետեւ ընկերային աշխատանք ունինք կատարելիք՝ տարբեր յանձնախումբերու մէջ, ակումբ կ'երթանք որովհետեւ, թէեւ մոռցած ենք ասիկա, բայց ակումբը մեր երկրորդ տունն է:

Դժբախտաբար սակայն ակումբներուն մէջ եւս մեր պատանիները իրարու հետ հայերէնով չէ որ կը հաղորդակցին. իսկ բախտաւոր պարագային, եթէ իրենց սգործածած լեզուն հայերէնն է, ապա տարօրինակ, անովոր հայերէն մը, ուր օտար բառեր հայերէնի հոլովումի եւ խոնարհումի ձեւերուն կ'ենթարկուին:

Ճիշդ է որ ասիկա կ'ըլլայ միայն զրոյցներու ընթացքին, խօսակցական լեզուին մէջ, բայց կը դառնայ պատճառ, որ հայերէնը կամացուկ մը սկսի շեղիլ մայր լեզու ըլլալէն ու դառնայ ... երկրորդ լեզու, զոր դասաւանդելու համար կը ստիպուինք այլ մէթոտներ օգտագործել:

Բարեբախտաբար վերջին քանի մը ամիսներուն, Գահիրէի մէջ թափ առած են դասախօսութիւնները, որոնք կարելոր դեր ունին անշուշտ լեզուն ետ իր կարգավիճակին բերելու: «Տեղեկատու»ի ներկայ թիւը կ'անդրադառնայ այդ դասախօսութիւններուն:

Բարի արձակուրդ ... հայերէնով:

Մ. Երամեան



ՑԱԽԱԿՑԱԳԻՐ

Գահիրե, 6 Յունիս, 2017

Գերաշնորհ Տ. Աշոտ Եպս. Մնացականեան
Բարեխնամ Առաջնորդ Եգիպտոսի Հայոց Թեմին

Գերաշնորհ Սրբազան Հայր,

ՀԲԸՄ-ի Եգիպտոսի մէջ գործող հինգ կառոյցները՝ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովը, ՀԲԸՄ-ի Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մասնաճիւղերը, ինչպէս նաեւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մարզական ակումբները, խոր կսկիծով տեղեկացան Ձեր սիրելի հօր՝ Պավլուշա Մնացականեանի մահուան գոյժին:

Հարազատի մը անվերադարձ մեկնումը մեր անցողակի աշխարհէն ու անոր պատճառած վիշտը կրնան սփոփուիլ միայն երկնային մխիթարութեամբ:

Սոյն գրութեամբ կը փափաքինք Ձեզի փոխանցել մեր եւ վերոյիշեալ կառոյցներուն բոլոր անդամներուն ցաւակցական անկեղծ զգացումները, Ամենակալէն խնդրելով որ երկնային հանգիստ պարգեւէ հանգուցեալի հոգիին եւ Ձեզի եւ Ձեր հարազատներուն՝ մխիթարութիւն, որպէսզի կարենաք համբերութեամբ տանիլ Ձեր ծանր կորուստը:

Խունկ ու աղօթք իր յիշատակին:

Գահիրէի ՀԲԸՄ-ի
Վարչութիւն

ՀԲԸՄ-ի Եգիպտոսի
Շրջանակային Յանձնաժողով

Տոքթ. Վիգէն Ճիզմէճեան
Արեւնապետ

Օննիկ Պըլըքտանեան
Արեւնապետ



ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Մայիս 20-ի երեկոյեան ժամը 7-ին կուկիկ հասարակութիւն մը փութացած էր ՀԲԸՄ-ի Գահիրէի գրասենեակին Ս. Չագըր սրահը, ունկնդրելու տիկին Սաթենիկ Չագըրի շիջումին 35 ամեակին նուիրուած դասախօսութիւն մը, որ յարգանքի արտայայտութիւն մը ըլլալու կոքին, նաեւ միտում ունէր գաղութի երիտասարդութեան ծանօթացնել կարելոր դէմք մը, որ իր մեծ ազդեցութիւնը ունեցած է համայնքի կեանքին վրայ եւ կը շարունակէ ունենալ մինչեւ այսօր, իշխանավայել նուիրատուութեան մը շնորհիւ:

Երեկոյին բացումը կատարեց ՀԲԸՄ-ի Գահիրէի ատենապետ տոքթ. Վիգէն Ճիզմէճեան, որ ներկայացուց տիկին Չագըրի կենսագրականը եւ շեշտեց անոր ըրած նուիրատուութեան կարեւորութիւնը, որովհետեւ, ըսաւ ան, «վերջին յիսուն տարիներուն նման մեծ նուիրատուութիւն չէ ունեցած եգիպտահայ գաղութը: Այս նուիրատուութեան շնորհիւ է որ Գահիրէի ՀԲԸՄ-ը աշխոյժ կազմակերպութիւն մը եղած է, որովհետեւ այս նուիրատուութիւնը անկիւնադարձ մը եղած է մեզի համար: Այս է պատճառը որ պարտաւորութիւն կը զգանք առիթ ստեղծել իր մասին խօսելու համար: Ասիկա կարելի է ընդհանրացնել մեր բոլոր նուիրատուներուն համար, որոնք խոհեմութիւնը ունեցած են ազգին օգտակար ըլլալու իրենց նուիրատուութիւններով»:

Յետոյ լսափողը յանձնեց օրուան բանախօսին՝ պարոն Պերճ Թէրզեանին, որ պատուոյ ատենապետն է ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին եւ Գահիրէի ՀԲԸՄ-ի վարչութեան:

Պարոն Թէրզեան իր խօսքին սկիզբը ըրաւ շատ կարելոր նշում մը, որուն ունկնդիրը պէտք էր ըլլար երիտասարդութիւնը, որմէ պիտի գան վաղուան մեր ղեկավարները: Դժբախտաբար սակայն այնքան փոքր էր երիտասարդութեան տոկոսը ներկաներուն մէջ, որ միայն ափսոսանք կը պատճառէր:



«Այսօր հաւաքուած ենք,- սկսաւ յարգելի դասախօսը,- ոգեկոչելու եգիպտահայութեան մեծագոյն բարերարներէն ՀԲԸՄ-ի բարերարուհի Սաթենիկ Չագըրի մահուան 35 ամեակի յիշատակը»:

«Մեր պատմութեան բազմաթիւ հարիւրամեակներու ընթացքին, պետական ու թեան բացակայութեան, մեր ժողովուրդին հաւաքական կեանքը գոյատեւած է շնորհիւ Սաթենիկ Չագըրի նման բարերարներու: Անշուշտ Եգիպտոսի մէջ մենք ունեցած ենք բազմատասնեակ բարերարներ, որոնց մէջ առաջին գծի վրայ կու գան Կարապետ Գալուստեանը (Գալուստեան վարժարանի հիմնադիր), Գրիգոր Եղիայեանը (Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիի եւ Եղիայեան Սանուց հիմնադրամ), Տիգրան փաշա Տ'Ապրօ (Գահիրէի Ազգային Առաջնորդարան) եւ Պողոս Նուպար փաշա (Գալուստեան վարժարանի նոր շէնք, Պուլաք, Նուպարեան վարժարան, Հելիոպոլիս), որոնց կատարած նուիրատուութիւնները եւ կտակները երկար տասնամեակներէ ի վեր կը հոգան եգիպտահայութեան զանազան կարիքները»:

«Նկատելի է սակայն որ մեր ժողովուրդին զաւակները չեն յաջողած, տարին գէթ մէկ անգամ, ցոյց տալ իրենց յարգանքն ու երախտագիտութիւնը այդ բարերարներուն հանդէպ»:

«Նկատելի է դարձեալ որ ՀԲԸՄ-ի բարերարուհի Սաթենիկ Չագըրի անունով Եգիպտոսի մէջ գործող հիմնադրամը, իր հաստատումէն քսան տարի անց, մինչեւ



այսօր եգիպտահայ գաղութին զանազան կարիքներուն համար տրամադրած է շուրջ 28 միլիոն Ե.Ռ., սակայն ան ազգային բարերարուհի չի համարուիր ...»

«Յամենայն դէպս այսօր հաւաքուած եւնք մեր բարերարուհիին յիշատակը յարգելէ զատ նաեւ ներկայացնելու եւ ծանօթացնելու անոր կատարած նուիրատուութեան պարագաները եւ այդ նուիրատուութեան իրագործումին անցած դժուար ուղին»:

«Այս նախաձեռնութեան գլխաւոր նպատակը մեր երիտասարդ սերունդը այդ մասին իրազեկելն է»:

Բարերարուհի Սաթենիկ Չագըր 1976 Յուլիսին, Գահիրէի Չամալէք թաղամասին իր առանձնատունը եւ անոր շրջակայ հողը (4097 քմ.) կը նուիրէր Գահիրէի ՀԲԸՄ-ին:

Այս առիթով 26 Մարտ 1976 տիկին Չագըրի ի պատիւ Գահիրէի մէջ ՀԲԸՄ-ի կողմէ սարքուած մեծարանքի հանդիսութեան մը ընթացքին, յանուն ցկեանս նախագահ Ալէք Մանուկեանի եւ Կեդրոնական Վարչական Ժողովին, զուիցերիական իրաւաւիճակով ընկերակցութեան պատուակալ վարիչ-պատուիրակ Արա Չամբէրթէն Լոզանէն գալով իրեն յանձնեց ՀԲԸՄիութեան բարերար անդամի վկայագիրը:

Բարերարուհին կը շիջէր Մայիս 1982-ին:

Դասախօսութիւնը մանրամասնօրէն կ'անդրադառնար այն բոլոր դժուարութիւններուն եւ դատերու ընթացքին, զորս շրջանցելը անհնար եղած է պատասխանատուներուն համար եւ որոնք մեծ համ-

բերանքով եւ հմտօրէն կրցած են այս կարեւոր նուիրատուութիւնը դնել հաստատուն հիմերու վրայ, որպէսզի համայնքին զաւակները շարունակեն օգտուիլ անկէ:

Այսպէս՝ տիկին Չագըրի առանձնատան մէջ ոտնձգութիւն ըրած անձին հետ եղած դատական հարցերը, բազմաթիւ բողոքները, որոնք ներկայացուած են պետութեան ՀԲԸՄ-ի դէմ, համայնքին ունեցած սխալ պատկերացումները եւ բազմաթիւ ակնկալիքները, այս եւ նման այլ հարցեր լուրջ խոչընդոտներ հանդիսացած են:

Տարիներ ետք, տիկին Ս. Չագըրի նուիրատուութեան նպատակներն ու մանրամասնութիւնները ներկայացնելու համար հրապարակային ասուլիս մը կազմակերպուած է եւ լուսաբանութիւններ տրուած են:

Անշուշտ ցաւալի է նշել, որ եղած բողոքներուն կարեւոր մէկ մասը կատարուած է համայնքի զաւակներուն կողմէ, ինչ-ինչ պատճառներով կամ պատճառաբանութիւններով:

Այս բոլորէն ետք, Թեմական Ժողովին ուղղուած նամակ մը հետեւեալ հարցադրումները ձեւակերպած է.

1-Կարգ մը ազգայիններ հետաքրքրուած են թէ սոյն կտակին եկամուտներէն պէտք է օգտուին գաղութիս մշակութային, խնամատարական եւ այլ կազմակերպութիւններ:

2-Շուրջ 18 տարիներ անցած են եւ ցարդ չէ իրականացած նուիրատուին փափաքը:

3-Կալուածին վրայի վիլլան եթէ վարձու տրուի, ի՞նչ պիտի ըլլան կարգ մը



կազմակերպություններու ակնկալութիւնները, որոնք, ըստ կտակին (ճշդել՝ նուիրատուութեան), պէտք է օգտուին նուիրատուութեան եկամուտներէն:

Թեմական ժողովը քննարկելով նամակին բովանդակութիւնը, կ'որոշէ զայն փոխանցել Գահիրէի ՀԲԸՄ-ի վարչութեան, այն հասկացողութեամբ որ վերջինս նամակով մանրամասն պատասխանէ այս երեք հարցադրումներուն:

Սոյն հարցադրումներուն պատասխանը, ըստ նախատեսուածին, հրատարակուած է եգիպտահայ մամուլի երեք օրկաններուն մէջ:

Թերեւս շատեր առարկեն թէ ինչ կարիք կայ այսքան մանրամասնօրէն պատմել եղած դէպքերը, մանաւանդ երբ առնոք կ'արատաւորեն նոյն ինքն համայնքի անդամները, որոնք չեն իսկ տատամ-

սած ներքին հարցերը մինչեւ պետութեան դռները հասցնելու համար:

Սակայն այս մանրամասնութիւնները ոչ միայն կարելոր մասերն են համայնքին պատմութեան, այլ եւ ցոյց կու տան թէ յաճախ – չըսելու համար մի՛շտ – պատասխանատու պաշտօններ որքան ծանր պատասխանատուութիւն կը դնեն զանոնք կրողներու ուսերուն, եւ կը փորձեն երիտասարդները լուսաբանել նման պաշտօններու առնչութեամբ:

Ներկաները հաճոյքով եւ հետաքրքրութեամբ ունկնդրեցին դասախօսութիւնը, ապա վայելեցին փոքր հիւրասիրութիւնը, որ գողտրիկ մթնոլորտ մը ստեղծեց Ս. Չաֆրը սրահէն ներս:

Մ. Ե.

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

ՀԲԸՄ-ի կատարողական արուեստներու բաժանմունքը բարեգործական համերգ մը կազմակերպած էր «Դուռն Ի՞նչ ըրիր Արցախի Համար» ծրագրին մէջ, օգնելու Արցախի երաժշտական դպրոցներուն:

Համերգին հասոյթը՝ չորս հազար ամերիկեան տոլար, պիտի տրամադրուի Արցախի երաժշտական դպրոցներուն գործիքներ գնելուն:

Համերգը տեղի ունեցած է Նիւ Եորքի Yamaha Piano Salon-ին մէջ, կատարողու-

թեամբ մեցցօ-սոփրանօ Սոլանժ Մերտինեանի, ջութակահար Սամի Մերտինեանի եւ դաշնակահար Հայկ Արսէնեանի, որ ՀԲԸՄ-ի Կատարողական Արուեստներու բաժանմունքին տնօրէնն է: Ծրագիրը ընդգրկած է հայկական գործեր, ինչպէս եւ արժէթիւնեան թանկօներ եւ ափրիկեան-գուպայեան պարեր:

Նման համերգներ տեղի պիտի ունենան նաեւ Երեւանի մէջ: Նպատակը 250 գործիքներ գնելն է, որոնցմէ արդէն երեք դաշնամուրներ առնուած են:





ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԷՆ

Դոկտ. Նայիրի Համբիկեանի Դասախօսութիւնը

Հայերը Հայաստանէն դուրս, Սփիւռքի տարածքին յաճախ կը փայլին որպէս աստղեր, բազմաթիւ եւ տարբեր բնագաւառներու մէջ՝ քաղաքականութենէն մինչեւ գիտութիւն, արուեստներէն մինչեւ ֆիլմաշխարհ: Ո՞վ լսած չէ ՇարլԱզնաւորի կամ Հէրի Վէրնոյի (Աշոտ Մալաքեան), Շէրի (Շէրլին Սարգիսեան) կամ Սերժ Թանքեանի անունները: Թէեւ նուազ հանրածանօթ, բայց իրենց ասպարէզներուն մէջ նոյնքան նշանաւոր են MRI (Magnetic resonance imaging) բժշկական գործիքը ստեղծող հայր՝ Ռյէմոնտ Տամատեան կամ ճարտարապետական մանրակերտներ պատրաստող Ռիչըրտ Թնկըրեան:



ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի սրահէն ներս, որ անսովոր կերպով լեցուն էր դասախօսուիին մտիկ ընելու եկած բազմութեամբ:

Դասախօսութիւնը կ'անդրադառնար Եգիպտոսի հնագիտական ամենավերջին պեղումներուն՝ «Մեմֆիս եւ Ամենհոփի III-ի տաճարին աշխատանքները, 1998-2017 թուականներուն, Թէպէսի մէջ»:

Պաստառին վրայ երեւցած խորագիրէն կ'իմանանք որ պեղումի եւ պահպանումի այս աշխատանքները կը կատարուին Եգիպտոսի հնագիտութեան նախարարութեան եւ Հնագիտութեան Գերմանական կաճառին կողմէ, որպէս վարիչ տնօրէն ունենալով դոկտ. Հուրի Սուրուզեանը, իսկ որպէս վայրին վերահսկիչ՝ դոկտ. Նայիրի Համբիկեանը: Այլ խօսքով՝ դասախօսուիին պիտի ներկայացնէր նիւթ մը, որ վերջին տարիներուն իր ամէնօրեայ աշխատանքը դարձած է:

Նման փայլուն անուններ եղած են Գահիրէի հայ գաղութին մէջ եւ կը շարունակեն ապրիլ ու գործել հոն: Անոնցմէ եղած են ճարտարապետներ Հայկազուն Շիրինեան (Ֆակալայի աւետարանական եկեղեցիին եւ Յուսաբերի շէնքին ճարտարապետը), Լեւոն Նէֆիլեան (Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին ճարտարապետը), Արամ Անդրանկեան (ՀՀ դեսպանատան եւ Աղեքսանդրիոյ առաջնորդարանի շէնքին ճարտարապետը), Կարօ Պալեան (քաղաքի կաթողիկէ եկեղեցիին ճարտարապետը), Հրազդան ՊԱլեան (Նուպարեան վարժարանի եւ Սէն Թէրէզ եկեղեցիի ճարտարապետը): Իսկ այսօր Գահիրէի մէջ կ'ապրին եւ կը շարունակե գործել Հուրի Սուրուզեան եգիպտաբանն ու Նայիրի Համբիկեան ճարտարապետ-հնագէտը երկուքն ալ դոկտորներ իրենց մասնագիտութեան մէջ:

Երեկոյին բացումը կատարեց Գահիրէի ՀԲԸՄ-ի ատենապետ տոթ. Վիգէն Ճիգմեճեան, որ ներկայացուց դասախօսուիին կենսագրականը, ապա անմիջապէս հրաւիրեց զինք իր խօսքը ներկայացնելու համար:

Կիրակի, 4 Յունիս 2017-ի երեկոյեան ճարտարապետ-հնաբան դոկտ. Նայիրի Համբիկեան, հրաւերովը Գահիրէի ՀԲԸՄ-ի ուղեւորներու եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի վարչութեան, դասախօսական ելոյթ մը ունեցաւ

Դոկտ. Նայիրի Համբիկեան սեփականատէրն է եւ վարիչը Գահիրէ հաստատութեան մը: Ծնած է Գահիրէ: Նախնական կրթութիւնը Նուպարեան Ազգային վարժարանէն ներս ստանալէ ետք յաճախած է Գահիրէի Համալսարանը եւ վկայուած որպէս ճարտարապետ, որմէ ետք մասնագիտացած է իսլամական եւ հայկական ճարտարապետութիւններու պատմութեան մէջ (2 masters), իսկ տարբեր համալսարաններու մէջ՝ Իտալիա, Գերմանիա, Հայաստան եւ Ամերիկա, կատարելագործուած է որպէս հնագէտ: 1985-էն ի վեր մաս կը կազմէ Եգիպտոսի տարբեր շր-



ջաններու մէջ ընթացող հնագիտական-պահպանական աշխատանքներուն: 1998-էն մասնագիտացած է հին Գահիրէի հնավայրերու պահպանութեան մէջ: Տնօրէնն է Պապ Զուէլլայի պահպանումի ծրագրին: Այս բոլոր աշխատանքներուն կողքին կը դասախօսէ Գահիրէի MIU (Misr International University) համալսարանէն ներս:

«Կը սիրեմ ի՛նչ որ կ'ընեմ»:

Այսպէս սկսաւ իր խօսքը սիրելի դասախօսուհին, որուն եռանդն ու անմիջականութիւնը վարակեցին ունկնդիրները եւ հաստատեցին իր այդ առաջին խօսքը, որմէ անմիջապէս ետք շնորհակալութիւն յայտնեց դոկտ. Հուրի Սուրուզեանին եւ անոր գերմանացի հնագէտ ամուսնին, «որոնցմէ շատ բան սորված եմ եւ որոնց քաջալերանքը մի՛շտ ունեցած եմ» ըսելով:

Բազմաթիւ լուսանկարներով հարուստ դասախօսութիւնը սկսաւ արագ ակնարկ մը նետելով փարաւոնեան շրջանի Եգիպտոսի պատմութեան, շրջաններուն, փարաւոններուն եւ ընդհանրապէս տաճարներու կառոյցին վրայ:

Դասախօսութիւնը կառուցուած էր երեք հիմնական հարցումներու շուրջ.

-Ի՞նչ կը փնտռէինք.

-Ի՞նչ գտանք,

-Ինչպէ՞ս պէտք է պահենք գտնուածը:

Այս վերջին հարցումին կարեւորութիւնը հաստատելու համար դասախօսուհին պատմեց այն երկու արձաններուն մասին, որոնք գտնուած են պեղումի նոյն այդ հողերուն վրայ. արձաններէն մին եղած է կիսափուլ, եւ երբ հովը փչէ, սուլելով կ'անցնի արձանին բացութիւններուն

մէջէն. այդ պատճառով կոչուած է «լացող մեմոն»:

Օրուան կառավարիչը երբ կը տեսնէ թէ որքա՛ն մարդ կու գայ «լացող մեմոն»ը տեսնելու, կ'որոշէ նորոգել զայն: Բայց նորոգումէն ետք արձանը կը դադրի ... լալէ:

Հետաքրքրական էր տեսնել որ ինչպէս եւ հասակով գետին փռուած հսկայ արձանները կանգնեցնելու համար ի՛նչ աշխատանք կը տարուի: Այդ աշխատանքին մէջ կը միանան հինէն եկած փարաւոնեան ձեւերն ու ամենէն արդիական միջոցները: Տպաւորիչ էր դիտել մանաւանդ մարդոց միասնական աշխատանքը. անոնց բազուկներուն շարժումները, ըստ գործողութիւնը կառավարող մեծաւորին, որ իր կանչերով կշռոյթ կը ճշդէ, կը յիշեցնէին հռոմէական տորմիդի նաւաստիներուն կամ բուրգերուն համար քար կրող գերիներուն շարժումները: Խիստ տպաւորիչ:

Նոյնիսկ յուզիչ էր դասախօսուհին նկարագրութիւնը այն պատանիներուն, որոնք պեղուած քարերու մանր կտորներ կը դասաւորեն, արձան մը կամ պատ մը ամբողջացնելու համար:

«Անոնք քարը կը կարդան, քարին երակներն ու երանգները կը հասկնան» ըսաւ դասախօսուհին այդ տղոց համար:

Տարբերակելով այս տաճարը Եգիպտոսի տարածքին գտնուող այլ հին տաճարներէ, դասախօսուհին նշել տուաւ որ այստեղ «ճարտարապետութիւն չկայ, կայ միայն հսկայ հոյլ մը արձաններու», որոնք հակառակ ճահիճի մը մէջ մնացած ըլլալուն, բաւական լաւ վիճակի մէջ յայտնաբերուած են: Բազմաթիւ արձաններ Սէխ-



մէթը՝ բժշկութեան եւ ուժի առիծագլուխ եւ կաս-կարմիր աչքերով աստուածուհին կը ներկայացնեն:

Կար ժամանակ երբ եգիպտաբան մը, ենթադրելով որ որոշ տարածք մը կրնայ հնավայր ըլլալ, պեղումներ կը կատարէր, աշխատանքը տեղոյն ժողովուրդին վստահելով: Այսօր սակայն մասնագէտներու հսկայ խումբ մը կ'աշխատի, այսպէս.



Եգիպտաբան, ճարտարապետ, հնագէտ, վերակացու, պահպանող, երկրաբան, երկրաշարժի մասնագէտ, կառոյցի եւ հողային **մեքանիքի** երկրաչափ, բուսաբան, հեռակայ միջոցներու մասնագէտ եւ լուսանկարիչ:

Դասախօսութիւնը վերջ գտաւ այն

պատկերներով, որոնք համակարգիչով կազմուած են եւ որոնք կը ներկայացնեն տաճարը ինչպէս որ էր իր ժամանակին, եւ ինչպէս որ պիտի ըլլայ պեղումի եւ պահպանումի աշխատանքները վերջ գտնելէ ետք:

Ներկաներէն շատեր երկար ժամանակ խմբուած մնացին դասախօսուհիին շուրջ, իրենց հետաքրքրութեան յագուրդ տալու համար:

Նոյնիսկ աւելի ուշ, ընթրիքի սեղաններուն շուրջ ներկաները կը շարունակէին զրուցել այս այնքան հաճելի, միաժամանակ այնքան լուսաբանող դասախօսութեան մասին:

ՆՈՒՊԱՐԵԱՆԻ ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ՏԱՐԲԵՐԱԿԸ



Ինչպէս ըսած էինք մեր նախորդ համարներէն մէկուն մէջ, ՀԲԸՄ-ի Փարիզի Նուպարեան մատենադարանը իր հաւաքածոն սկսած էր տեղադրել համացանցին մէջ, դիւրացնելու համար աշխարհի տարբեր երկիրներու մէջ ապրող հայագէտներու (հայ թէ օտար) աշխատանքը:

Ընթացիկ տարուան Մայիսին Նուպարեան մատենադարանը յայտարարած է սկիզբը իր կայքէջին օտարալեզու՝ անգլերէն եւ ֆրանսերէն տարբերակին:

Համացանցային Նուպարեան կայքէջը կը ներկայացնէ նաեւ անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով ցուցահանդէս մը, Օս-

մանեան հայերու եւ Հայկական Զարդերուն մասին, որ «Հայաստան 1915» խորագրուած է եւ որ հիմնուած է Փարիզի քաղաքապետարանին մէջ տեղի ունեցած եւ «Armenie 1915» խորագրուած ցուցահանդէսին վրայ:

Եղեռնի հարիւր ամեակին նուիրուած այս ցուցահանդէսը «Եւրոպայի մէջ տեղի ունեցած ամենամեծը կը համարուի: Նուպարեանի օտարալեզու կայքէջին մէջ ներառնուած են գլխաւոր ցուցանմուշները, վերանայուած գրութիւններով» ըսած է Նուպարեան մատենադարանի տնօրէն Պորիս Աճէմեան:



AVC-ի ԵՐՐՈՐԴ ՀՈՒՆՁՔԸ

Արդեն երրորդ տարին է որ հայերեն լեզուի առցանց դասընթացքը իր տարեշրջանը յաջողութեամբ կ'աւարտէ, Գահիրէի ՀԲԸՄ-իութեան Սաթենիկ Չագըր կեդրոնէն ներս:



Վկայագրերու յանձնման արարողութիւնը տեղի ունեցաւ Կոկանեան Սրահին մէջ, Չորեքշաբթի, 14 Յունիս, 2017-ի երեկոյեան:

Աշակերտներուն ուրախութիւնը յստակ ցուցանիշ մըն է այս ծրագրին եւ դասատուներուն յաջողութեան: Ճիշդ է որ ծրագիրը առցանց է եւ ուղղուած ինքնաշխատութեամբ, կեդրոնէն՝ Երեւանէն որոշուած ուղեցոյց-դասատուներու օգնութեամբ հայերէն սորվելու, սակայն Գահիրէի ՀԲԸՄ-ի վարչութիւնը յարմար տեսած է որ ուղղակի դասերով եւ երկու դասատուներու օգնութեամբ կատարուի դասընթացքը, միշտ AVC կեդրոնին համագործակցութեամբ:



Թէեւ որոշուած էր համացանցի միջոցով կապուիլ թէ՛ AVC-ի տնօրէն դոկտ. Երուանդ Զօրեանին, թէ՛ Գահիրէի համար որոշուած Երեւանէն երկու դասատուներուն հետ, սակայն կարելի չեղաւ կապ հաստատել, եւ դասընթացքին պատասխանատու Տիկին Աննա Թրայեանի բացման անգլերէն խօսքով սկսաւ հանդիսութիւնը:

Տիկին Թրայեան խոստացաւ յաջորդ տարուան բացման խօսքը անպայման հայերէն ընել, նկատի առնելով որ տարի մը եւս հայերէն դասեր առնելէ ետք, մասնակցողները դիւրութեամբ պիտի կարենան հասկնալ հայերէն խօսքը: Տեղեկացուց նաեւ, որ այս դասընթացքը նախ սկ-

սած է «ամենէն հայկական մարզանքով՝ chess-ով, որուն հայերէն ճատրակ կ'ըսենք»: Շնորհակալութիւն յայտնեց Գահիրէի ՀԲԸՄ-ին, որ միշտ նեցուկ է այս դասընթացքներուն: Տիկին Թրայեան տեղեկացուց նաեւ որ նպատակ ունին շատ փոքր տղոց համար սկսելու ճատրակի դասընթացք մը, որուն ծրագիրը պատրաստութեան մէջ է:

Ապա մասնակիցներէն իւրաքանչիւրը կարդաց իր պատրաստած սրտի խօսքը, հայերէնով:

Թոնի Թազա ըսաւ՝ «Ես հայերէն կը սորվիմ, որովհետեւ հայ եմ եւ ընտանիքս հայ է»:

Իսկ Ամիր Եուսէֆ՝ «Ես հայերէն կը սորվիմ, որ հայ ընկերներուս հետ հայերէն խօսիմ»:

Երրորդ տարին աւարտած մասնակիցները կարդացին The Promise շարժապատկերը դիտելէ ետք իրենց ունեցած մտորումները, որոնք արձանագրուած էին տեսերիզի վրայ եւ տպաւորեցին բոլոր ներկաները:

Անոնցմէ մէկը, երիտասարդուհի մը՝ Եասմին Եուսէֆ ըսաւ.

«Ես հայ չեմ. բայց կը հաւատամ հայկական հարցին»:

Սինտի Եուսէֆ՝ «Այս ֆիլմը պիտի ճնշէ թուրքերուն վրայ որ ընդունին իրենց սխալները»:

Ապա Գահիրէի ՀԲԸՄ-ի ատենապետ տոքթ. Վիգէն Ճիզմէճեան ելոյթ ունեցաւ Հայաստանի եւ եգիպտահայոց պատմութեան նուիրուած դասախօսութեամբ մը,



որ հետաքրքրեց ներկաները եւ ընդհանուր պատկերացում մը տուաւ մանաւանդ հայերէն լեզուի դասընթացքներուն հետեւող մասնակիցներուն:

Երեկոն իր աւարտը գտաւ փոքրիկ հիւրասիրութեամբ:

Այս առիթով հաճելի հանդիպում-զրոյց մը ունեցանք դասընթացքին զսպանակը հանդիսացող տիկին Աննա Թրայեանին եւ երկու դասատուներուն՝ տիկիններ Լալա Շամամեան-Նիկոլեանի եւ Սիլվա Պայրամեան-Սիմոնեանի հետ, որուն ներկայ էր նաեւ երրորդ տարուան ուսանողուի Մատոնա Ուասէֆ:

Հարցում – Ինչպէ՞ս ունեցաք այս դասընթացքը Գահիրէի մէջ սկսելու գաղափարը, այսինքն փո՞րձ էր ձեր ըրածը, թէ կարիքը զգացիք:

Աննա Թրայեան – Կարիքը միշտ զգացած եմ. այն օրուրնէ որ Եգիպտոս հասած եմ, տեսած եմ թէ հայկական դպրոց գացած եւ հայերէն խօսողներու կողքին մեծ թիւ մը կայ, որ հայերէն չի խօսիր, մանաւանդ հայ կաթողիկէ համայնքէն ներս, որոնք բնաւ առիթ չեն ունեցած հայերէն սորվելու: Ուրեմն նշմարեցի որ ամբողջ եգիպտահայութեան մէջ հայերէն լեզուի պահանջը կայ:

Հ. Բայց այդ պահանջը կա՞ր, այդ մարդիկը կ'ուզէի՞ն հայերէն սորվիլ:

Ա. Թ. Նշմարած էի որ կաթողիկէները մանաւանդ միշտ փափաք ունեցած են հայերէն սորվելու. իսկ անոնք, որոնք առիթ չէին ունեցած սորվելու, իրենք զիրենք տկար կը զգային հայերուն մէջ:

Հ. Ուրեմն կարելի է ըսել որ կարիքի մը արդիւնքն էր այս դասընթացքը:

Ա. Թ. Այո. բայց ես երբեք չէի կարծեր թէ ե՛ս պիտի ըլլամ այն անձը, որ այս գործունէութիւնը պիտի սկսի:

Հ. Ինչո՞ւ չէիք կարծեր:

Ա. Թ. Չէի կարծեր ... բայց փափաքը ունէի հաւանաբար: Երբ Երեւան ծանօթացայ AVC-ին, տեսայ եւ իրենք եւս տեսան, թէ կրնամ այս գործը սկսիլ: Վերադարձիս, Գահիրէի ՀԲԸՄ-ին քաջալերանքով – որովհետեւ AVC-ին արդէն Բարեգործականին կը պատկանի – սկսանք աշխատանքներուն: Նախ ճատրակի դասերով սկսանք – այս դասընթացքը եւս կը պատկանի AVC-ին – մենք ճատրակը հայկական մարզածեւ կը սեպենք: Մեծ ընդունելութիւն գտաւ ճատրակի դասընթացքը, հետաքրքրական առիթներ սկսանք կազմակերպել ... յաջորդ քայլը հայերէն լեզուի դասընթացքն էր:

Հ. Հաւանաբար սկիզբը խոչընդոտներ ունեցաք. ի՞նչ էին անոնք:

Ա. Թ. Ճատրակին վերաբերող խոչընդոտները ըսեմ. սկիզբը գաղափարը այնքան ալ հետաքրքրական չթուեցաւ. թիւը կամաց-կամաց հաւաքուեցաւ, եկողները իրենց ընկերները բերին եւ այլն: Հետաքրքրական այլ երեւոյթ մըն ալ կայ ճատրակին համար՝ սկիզբէն ուսուցիչ չունեցանք, ուսուցիչը խումբին մաս կը կազմէր, թէ՛ աշակերտ էր, թէ՛ ուսուցիչ:

Հ. Ինչպէ՞ս կատարուած է աշակերտներուն ընտրութիւնը, կամ աշակերտները ինչպէ՞ս լսած են այս դասընթացքին մասին, հարցումս մասնաւորաբար հայերէնի դասընթացքին մասին է:

Ա. Թ. Սկիզբը համացանցին միջոցով ծանուցում ըրինք, յետոյ գացինք հայ կաթողիկէ համայնքին եւ հոն դասընթացքի



Ներկայացումը ըրինք – presentation – հոնկէ էր որ աշակերտներու մեծ թիւ մը ունեցանք:

Հարցումը կ'ուղղեմ դասատուներէն տիկին Սիլվա Պայրամեան-Սիմոնեանին.

Հ. Անցնող երեք տարիներու ընթացքին, դասընթացքը որոշ փոփոխութիւններ կրե՞ր է:

Սիլվա Սիմոնեան – Անշուշտ ծրագիրը, որուն կը հետեւինք, Երեւանէն եկած է: Բայց աշակերտներուն հետ մեր աշխատանքին ընթացքին կարգ մը փոփոխութիւններ կարելի է ընել. օրինակ, իւրաքանչիւր մակարդակ ութ շաբաթներու համար է, բայց եթէ տեսնենք որ իւրաքանչիւր դասը մէկ շաբաթէն աւելի կը կարօտի, կրնանք երկարաձգել, ըստ աշակերտներուն սորվելու պատրաստակամութեան:

Հ. Գալիք տարեշրջանին համար չորրորդ մակարդակ գացող աշակերտներ ունիք. ծրագրի փոփոխութիւն կա՞յ նոր շրջանին համար:

Ս. Պ. Դասերը, որոնք ութ շաբաթներու համար ծրագրուած են, կը ծրագրենք տասը կամ տասնմէկ շաբաթներու համար, որպէսզի եթէ կարիք ըլլայ, միջոց ունենանք երկարաձգելու:

Հ. Անշուշտ գիտենք թէ AVC-ի դասերը ծրագրուած են այնպէս որ սորվիլ ուզողը մինակը, ինքնուրոյն աշխատանքով կարենայ հետեւիլ դասերուն եւ սորվի լեզուն: Այս պարագային ի՞նչ է ձե՞ր դերը,

դուք որ կը կենաք կեդրոնին եւ աշակերտին միջեւ:

Ս. Պ. Բացատրեմ. առաջին հանդիպումին իրենց կը բացատրեմ թէ ինչպէ՞ս պէտք է բանան առցանց դասերը եւ սորվին: Երբ յաջորդ շաբաթը կու գան, իրենց համար վարժութիւններ պատրաստած կ'ըլլամ, տառերով եւ բառերով խաղեր, որպէսզի կարենան աւելի լաւ հասկնալ:

Հ. Այլ խօսքով՝ դուք կը դիւրացնէք սորվելու ընթացքը իրենց համար, այո՞:

Ս. Պ. Այո՛:

Լալա Շամամեան-Նիկոլեան – Մենք իրենց համար աւելի վարժութիւններ կը պատրաստենք, որպէսզի նոր դասաւանդուած նիւթը լաւ ձեւով հիմնաւորուի իրենց մէջ, առաւել՝ զրուցատրութիւն ալ կ'ընենք, խօսելու եւ զրուցելու զարկ կու տանք, որովհետեւ մասնակցողներուն մեծամասնութիւնը աշխատող է, ժամանակ չ'ունենար դաս պատրաստելու:

Հ. Շաբաթական քանի՞ դաս ունիք:

Լ. Շ. Մէկ անգամ, երկու ժամ: Անուշտ շաբաթը մէկ անգամը քիչ է լեզու սորվելու համար: Յետոյ՝ դասարան մը տասը հոգէին աւելի ըլլալու չէ, որպէսզի իւրաքանչիւրը իր լրիւ իրաւունքը ստանայ դասաւանդութենէն՝ կարդալու, վարժութիւնները կատարելու, զրուցելու եւ այլն:

Հ. Կրնա՞ս հակիրճ կերպով նկարագրել դասապահ մը՝ ի՞նչ կ'ընէք, ինչպէ՞ս կը սկսիք դասը եւ ինչպէ՞ս կ'աւարտէք:



Լ. Շ. Ընդհանրապես քերականութեամբ կը սկսինք, եթէ բացատրուելիք նոր օրէնք մը կայ, յետոյ վարժութիւններ պատրաստած կ'ըլլամ, անոնք կ'ընենք, վերջը AVC-ի իւրաքանչիւր դասին վերջաւորութեան գտնուող զրուցատրութիւնը տպած կ'ըլլամ, կը բաժնեմ եւ կը սկսինք զրուցել: Ընդհանրապէս դասերը շատ դիրին են, հեզասահ կերպով կ'ընթանան. զրոյցը սակայն դիրին չէ, եւ մասնակիցը յանկարծ կը զգայ թէ ինք տակաւին բան չի գիտեր: Անշուշտ նաեւ խաղեր պատրաստած կ'ըլլամ՝ խաչբառ, պահուած բառը գտնել եւ այլն:

Հ. Բայց էական բան մը կայ՝ կրնա՞ն դասի ընթացքին իրարու հետ հայերէն խօսիլ, գոնէ դասերուն ընթացքին. ի վերջոյ երրորդ տարին աւարտած են քու աշակերտներդ:

Լ. Շ. Ոչ, չեն կրնար, որովհետեւ մասնակիցներէն շատեր բնաւ առիթ չունին հայերէնին հետ ըլլալու՝ խօսելու թէ լսելու:

Հ. Անոնք, որոնք հայերէն լսելու բնաւ առիթ չունին՝ ոչ ընտանեկան կապեր, ոչ ընկերներ եւ այլն, ինչո՞ւ կու գան հայերէն սորվելու:

Լ. Շ. Պարզ է՝ հայ կաթողիկէներ են, որոնք լրիւ կորսնցուցած են իրենց հայութիւնը:

Հ. Մինչեւ հիմա չէին մտածած հայերէն սորվելու մասին. ի՞նչ պատահեցաւ յանկարծ:

Լ. Շ. Շատ մեծ դեր խաղցաւ հայկական անցագիր ստանալու իրողութիւնը. Հայաստան գացին, անցագիր առին, ուղղակի սիրահարեցան երկրին՝ գեղեցկութեան, մաքրութեան, անշուշտ նաեւ մշակոյթին, եւ այլն. ասիկա մեծ դեր ունեցաւ որ իրենց մէջ հայ ոգին արթննայ: Մեր աշակերտներուն մեծ մասը անոնք են. մնացեալը **դպրոցներ** են, որոնք հայերու հետ ամուսնացած են եւ որոնց զաւակները հայկական դպրոց կ'երթան:

Հ. Լաւ, եթէ դուք չըլլաք, այս արարկամ հայերէն բնաւ չգիտցող հայ աշակերտը բանայ համացանցային ծրագիրը եւ ուզէ սորվիլ, ինչպէ՞ս պիտի սորվի:

Ս. Պ. Անշուշտ անգլերէն բացատրութիւններ կան:

Ա. Թ. Երբ աշակերտը համացանցային կապ ունի, AVC-ի դասատուն ուղղակի կապի մէջ կրնայ ըլլալ աշակերտին հետ, եւ եթէ պէտք զգացուի, դասատուն կրնայ յաւելեալ հանդիպումներ ալ ունենալ: Բայց հոս մեր ուսուցիչներն են որ կ'ընեն այդ յաւելեալ աշխատանքը:

Ս. Պ. Ինչ որ համացանցային դասէն կը սորվին, հոս կ'ամրապնդուի:

Հ. Այս ձեւը ընդունուած է այլ երկիրներու մէջ:

Ա. Թ. Այո, ասիկա AVC-ին ձեւն է, որ hybrid education կը կոչուի: Իւրաքանչիւր գաղութի համեմատ ձեւ կ'որդեգրուի անշուշտ:



Ա. Պ. Ուրիշ քաղաքներու մէջ կարծես դպրոց ալ կայ:

Ա. Թ. Այո. մենք ալ, երկու նիւթ ունենալով՝ ճատրակ եւ հայերէն, կրնանք դպրոց համարուիլ՝ AVC school Egypt: Անշուշտ կ'ուզենք այլ նիւթեր եւս դասաւանդել, բայց ատիկա տակաւին ծրագրումի հանգրուանին մէջ է:

Հ. Թերեւս կարելի է հայոց պատմութեան բաժին բանալ, ուր մասնակիցները հայեր պիտի ըլլան անշուշտ:

Ա. Թ. Այն ալ ըսեմ որ բոլոր դասերը եօթը լեզուներով դասաւանդելու կարելիութիւնը ունի AVC-ն. օրինակ կարելի է հայոց պատմութիւնը անգլերէնով, ֆրանսերէնով, գերմաներէնով, նոյնիսկ թրքերէնով սորվիլ: Միայն արաբերէն չկայ, այն նկատառումով որ արաբական երկիրներուն մէջ հայերը ընդհանրապէս հայախօս են արդէն:

Հարցումս կ'ուղղեմ մեր զրոյցին ներկայ գտնուող աշակերտուհիին՝ Մատոնա Ուսաէֆի: Բայց որովհետեւ հայերէնը ամբողջութեամբ չի հասկնար տակաւին, իր դասատուն կը ստիպուի թարգմանաբար ըսել՝ Why do you want to learn Armenian?

Մատոնա – (կը կարդայ գրածը) Իմ մեծ մամաս հայ է. իմ անունս Մատոնա. Ես երկու մակարդակ ըրած եմ, հայերէն սորվիմ, իմ մեծ մայրս եւ մայրս հայ են, հայերէն կը խօսին ...

Հ. Բոլոր մասնակիցները ունին մէկ եւ միեւնոյն պատճառը հայերէն սորվելու:

Ա. Թ. Պատճառները ընդհանրապէս զգացմունքային են եւ կապուած են սիրոյ զգացումին հետ՝ մօր կամ մեծ մօր հանդէպ սէր, կնոջ կամ ամուսնին հանդէպ սէր, զաւակին կամ թոռնիկին հանդէպ սէր, Հայաստանի, յիշատակին, անցեալին եւ ապագային հանդէպ սէր, մէկ խօսքով՝ կապը հայերէնին հետ զգացմունքային է:

Ա. Պ. Իմ դասարանս կան տիկիներ, որոնք կ'ուզեն հայերէն սորվիլ, կարենալ

օգնելու համար իրենց զաւակներուն, որոնք մեր դպրոցը կը յաճախեն: Օրինակ Թորիկեաններուն տիկիները, կամ Գասապեանին փեսան ...

Հ. Փեսայ որ կ'ըսէք, հայ չէ, բայց կու գայ հայերէն սորվելու, ճի՞շդ եմ:

Ա. Թ. Կինը հայ է, զաւակները հայկական դպրոց կու գան, ընտանիքը հայախօս է, եւ ինք հայերէն խօսելու, զակին հետ հայերէնով հաղորդակցելու փափաքը ունեցած է:

Շատեր միշտ ալ փափաք ունեցած են հայերէն սորվելու, բայց միշտ ալ չեն յարատեւած: Նման մարդիկ կ'ըսեն՝ թերեւս այս դասընթացքին շնորհիւ կարենանք յարատեւել եւ ի վերջոյ լեզուն սորվիլ:

Կ'ուզեմ այստեղ անպայման նշել ՀԲԸ-Միութիւնը, որ սկիզբէն իսկ մեզի նեցուկ եղած է, մեր բոլոր ծախսերը կը հոգայ, դասաւանդումի վայրը տրամադրած է: Շնորհակալութիւն այս մեծ միութեան:

Հ. Կ'ուզէ՞ք բան մը ակնցնել մեր զրոյցին:

Ա. Թ. Գահիրէի գաղութը շատ փոքր է, թերեւս AVC-ն սկիզբը մեծ սպասումներ չունեցաւ, բայց այս երեք տարիներու արդիւնքը հակառակը փաստեց:

Հ. Դասաւանդումի ոճը դասակա՞ն է, թէ՞ նորարարութիւն կայ:

Ա. Թ. Նորարարութիւն կայ եւ ատիկա է որ շատ գրաւիչ է մասնակիցներուն համար՝ online computerised education, որ որոշ տարիքի մը համար (երէցներ) կրնար դժուար թուիլ. սակայն տարիքի այդ խմբաւորումին համար AVC-ն առիթ եղաւ նոր աշխարհ մը՝ համացանցային աշխարհը մտնելու. հայերէնին առիթով նաեւ համացանցէն շատ բան սորվեցան:

Հ. Շնորհակալ եմ այս զրոյցին համար եւ յաջողութիւն կը մաղթեմ ձեզի:



ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ

Շաբաթ, 24 Յունիս, 2017-ի երեկոյեան ժամը 7-ին ՀԲԸՄ-ի Ս. Չազըր փոքրիկ սրահը գրեթե ամբողջությամբ լեցուած էր հետաքրքիր ունկնդիրներով, որոնք եկած էին լսելու դոկտ. Անդրանիկ Տազէսեանի դասախօսութիւնը, ինքնութեան հարցերու մասին:



Դոկտ. Անդրանիկ Տազէսեան հրաւիրուած է Պէյրութէն, թուայնացնելու համար ՀԲԸՄ-ի Միութեան արխիւները:

ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ տիար Օսնիկ Պըլըքտանեան բացումը կատարեց երեկոյին եւ ներկայացուց դասախօսին կենսագրութիւնը, հակիրճ տողերու մէջ:

Դոկտ. Անդրանիկ Տազէսեան ծնած է Պէյրութ, 1960-ին: Երեւանի Պետական համալսարանէն վկայուելէ վերջ բանասիրական գիտութիւններու մէջ, շարունակած է իր ուսումը Սկոտլանդի Ապըրտին քաղաքի համալսարանը եւ Պէյրութի Ամերիկեան համալսարանը, տիրանալով մագիստրոսական աստիճանի (MA), իսկ 2011 թուականին տիրացած է վարդապետական աստիճանի (PhD), Ուէյլզի Սուանսի համալսարանէն:

Հեղինակ է եւ խմբագիր բազմաթիւ հատորներու, որոնցմէ վերջին երկուքը լոյս տեսած են 2017 թուականին՝ «Լիբանանի Հայերը Բ.» եւ Բարսեղ Կանաչեանի նուիրուած հատոր մը, «Կեանքի մը Երաժշտականացումը» խորագրով:

Դոկտ. Տազէսեան վարիչն է Հայկազեան համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին եւ խմբագիրը՝ Հայկազեան Հայագիտական Հանդէսին (Հայկազեան Համալսարան):

Տիար Պըլըքտանեանի բարի գալուստի խօսքէն ետք դոկտ. Տազէսեան սկսաւ իր դասախօսութիւնը, որ կը կրէր «Սփիւռքահայութիւնը եւ հայուն ինքնութիւնը» խորագիրը:

Դոկտ. Տազէսեան իր խօսքին առընթեր կը ցուցադրէր լուսանկարներ եւ խօսքի հատուածներ, որոնք կը միտէին բացայայտել ազգ եւ ինքնութիւն եզրերն ու անոնց բաղադրիչները:

Այսպէս, յարգելի դասախօսը յստակօրէն նշեց թէ «ինքնութիւնը տինամիք, յարափոփոխ, ազդող եւ ազդուող, յարաբերական եւ ընկերային ե-

րեւոյթ մըն է, որ բազմերես դրսեւորումներ ունի», ներկայացուց ներկայ միջազգային հասկացողութիւնը այդ եզրին, եւ ներկայացուց երեք տարբեր ուղղութիւններ այդ առնչութեամբ, իրարու հակադիր գոյգ սկզբունքներով, այսպէս.

Ա. 1- նախաստեղծ, ԱԶԳը ինք կը ճշդէ իր քաղաքացիներուն էութիւնը,

2- Անհատը ինք կ'որոշէ ԱԶԳին մաս կազմել, թէ ոչ:

Բ. 1- ԱԶԳ եզրը հնամենի հասկացութիւն է,

2- նոր հասկացութիւն է, 18րդ դարուն ծնունդ առած:

Գ. 1- ԱԶԳին դերը որպէս ընկերաբանական կերտուածք, ստեղծուած՝ հաւաքականութիւնները վերահսկելու եւ օգտագործելու համար,

2- էթնիք խորհրդանիշ մը, անընդմէջ շղթայ մը անցեալի եւ ներկայի հաւաքականութեան:

Միջազգային այս երեք ուղղութիւնները իրենց հայկական զուգահեռը ունին նաեւ, որոնց համար դոկտ. Տազէսեան օրինակներ բերաւ անգլերէն թէ հայերէն հրատարակուած գիրքերէ, ինչպէս օրինակ Էնթընի Սմիթի կամ Պէնէտիքթ Էնտըրսընի, Սիւնիի, Այվազեանի, Փանոսեանի եւ Աբրահամեանի հատորները, որոնց հեղինակներէն իւրաքանչիւրը իր տարբեր համոզումը ունի:

Ամփոփելով այս բոլորը, դոկտ. Տազէսեան եզրակացուց թէ «ճիշդ պիտի չըլ-



լար հաստատուն բան մը պարտադրել տինամիք երեւոյթի մը ... եւ թէ բոլորին համար նոյնաձեւ, նոյնաբնոյթ եւ նոյնատեսակ չէ, այլ ճիշդ հակառակը՝ անձնական է եւ գիտակցուած, եւ թէ կը վերափոխուի եւ կը ձեւաւորուի ընկերային յարաբերութիւններու, հանգրուաններու ընթացքին, առանց մեր անմիջական եւ լիարժէք գիտակցութեան»:

Հետեւաբար եզրակացութիւնն ալ

սպասելի էր՝ ինքնութիւնը, համաշխարհայնացումի այս դարուն բան մըն է, զոր պէտք է ձգել անհատի ընտրութեան, մանաւանդ որ կարելի չէ դիմադրել անոր նման հզօր երեւոյթի մը:

Լսարանը մեծ ուշադրութեամբ հետեւել է ետք դասախօսութեան, հարցումներ ուղղեց յարգելի դասախօսին, որմէ ետք բոլորը շարունակեցին իրենց զրոյցը, փոքրիկ հիւրասիրութեամբ:



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Տոքթ. Սուրեն Պայրամեանի աշխատասիրութեամբ

Բոլորովին վերջերս՝ ընթացիկ տարուան Յունիսի սկիզբը լոյս տեսաւ եգիպտահայ մտաւորական տոքթ. Սուրեն Պայրամեանի «Հայկական Համայնքային Կառոյցները Եգիպտոսի Մէջ» հատորը, հրատարակուած Գահիրէի Ազգային Առաջնորդարանի միջոցներով եւ տպագրուած «Նուպար Տպագրատուն, Գահիրէ»:

Ասիկա վեցերորդ հատորն է մեծայարգ հեղինակին, որուն բոլոր գործերը կը բխին եգիպտահայ գաղութի պատմութենէն եւ կը բեւեռուին անոր շուրջ, մոռացումէ փրկելու համար այն հսկայածաւալ աշխատանքն ու իրագործումները, զորս իրագործած է այս գաղութը իր պատմութեան ընթացքին, իրեն եւ զինք հիւրընկալած երկրին համար: Եւ այսպէս.

Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Գահիրէ, 2005

Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ, Գահիրէ, 2012

Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ (արաբերէն եւ անգլերէն), Գահիրէ, 2013

Յուսաբեր Օրաթերթի 100-ամեակ, Գահիրէ, 2013

Հայ Գրատպութեան 500-ամեակի (1512-2012) Ոգեկոչումը Գահիրէի Մէջ, Գահիրէ, 2013

Իսկ այս վերջին հատորը նուիրուած է Հայաստանի անկախութեան 25-ամեակին եւ ձօնուած հեղինակին «հայադրոշմ դուստրերուն»՝ Սօսէի եւ Սիլվայի եւ «հայազարմ թոռներուն»՝ Կարինի, Սասունի, Արեգի եւ Տեսիլի:

Համադրումի հսկայ աշխատանք մը, որ ի մի կը բերէ եգիպտահայոց տարբեր կառոյցները՝ եկեղեցի, դպրոց, ակումբ եւ այլն, Եգիպտոսի տարբեր քաղաքներուն մէջ, ուր այսօր ոչ իսկ մէկ հայ կարելի է գտնել, անշուշտ բացի Գահիրէէն եւ Ալեքսանդրիայէն:

«Յառաջաբան»ին մէջ (էջ VII) հեղինակը

կը կը խոստովանի թէ այս աշխատասիրութիւնը արդիւնքն է նախկին երկու հատորներուն՝ «Եգիպտահայ Մամուլը»ի եւ «Հայ Գրատպութեան ...»ի հանդէպ հայրենիքի թէ Սփիւռքի, ինչպէս նաեւ գաղութահայ երիտասարդ տարրերու ցուցաբերած հետաքրքրութեան:

Օգտագործուած աղբիւրներու ցանկը բաւական հարուստ է մամուլի անուններով, միութիւններու հրատարակած ծրագիր-կանոնագրերով եւ զանազան հրատարակութիւններով:

Հատորը կը հաշուէ մեծ չափի 212 էջեր, ինչպէս նաեւ սկիզբի XII էջերը:

Աշխատասիրութիւնը բաժնուած է գլխաւոր ինը մասերու՝ վարժարաններ, մշակութային եւ զանազան այլ միաւորներ, նուագախումբեր, երգչախումբեր, թատերախումբեր, մարզական ակումբներ, տպարաններ, գրադարաններ եւ մամուլ:

Ունի նաեւ հարուստ բաժին մը լուսանկարներու պատճեններու, որոնց մէջ շատ հետաքրքրական են «Մեծ Եղեռնի Եգիպտահայ Յուշակոթողները», Գահիրէի Ար. Գրիգոր Լուսաւորիչ եւ Հելիոպոլսոյ Ս. Թերեզա Կաթողիկէ եկեղեցիներու շրջաբակերուն, Աեքսանդրիոյ եկեղեցւոյ շրջաբակին եւ Փոր Սայիտի գերեզմանատան մէջ:

2007 թուականին Գահիրէի օփերային հանդիպակաց զբօսայգիին մէջ տեղադրուած է եգիպտացի եւ հայ ժողովուրդներու բարեկամութեան նուիրուած հսկայ արձան մը (հեղինակ՝ քանդակագործ Սարգիս Թօսունեան, Ալեքսանդրիա), որուն լուսապատճէնը եւս ներառնուած է այս հատորին մէջ:

Անշուշտ նման գիրքեր «վիպային» ընթերցումի համար նախատեսուած չեն՝ մէկ շունչով կարդալու եւ հաճոյք ստանալու, բայց անգամ մը որ թերթատել սկսինք, կարելի չ'ըլլար կանգ առնել, որով-



հետեւ այնտեղ կը գտնենք ոչ միայն հետաքրքրական մանրամասնութիւններ, այլ ականատես կ'ըլլանք համայնական գիտակցութեան մը կամ ժողովրդային մաքուր բնազդի մը դրսեւորումին, նիւթականացումին:

Առաջին՝ դպրոցներու նուիրուած բաժնին մէջ կը տեսնենք թէ առաջին եգիպտահայ դպրոցը՝ «դպրատուն-հիւրանոց»ը հիմնուեր է Գահիրէի մէջ, 1828 թուականին եւ տներ է մինչեւ 1854:

Եղիազար Ամիրայ Պետրոսեանի ծախսով եւ իր ծնողքի յիշատակին նախ կառուցուած է հիւրանոցը, ապա՝ դպրատունը, որ կոչուած է Եղիազարեան դպրատուն եւ որ «կը հանդիսանայ կորիզը եգիպտահայոց ազգային վարժարանին»:

Վարժարաններ եղած են Գահիրէէն զատ Աղեքսանդրիոյ, Փոր Սայիտի, Զակազիկի եւ Ասիութի մէջ նաեւ, թէեւ այսօր վերջին երեք քաղաքներուն մէջ հայեր ալ չեն ապրիր, հետեւաբար դպրոցներ չկան:

Պէտք է նշել նաեւ որ վարժարաններէն մին եղած է Սիսուանը, Փոր Սայիտի վրանաքաղաքին մէջ, ինչ որ կը հաստատէ կրթութեան կարեւորութիւնը եգիպտոս եկած հայերուն եւ վրանաքաղաքի պատասխանատուութիւնը իր վրայ առած ՀԲԸՄիութեան համար:

Եգիպտահայ միութիւններուն եւ ընկերութիւններուն նուիրուած բաժինը խիստ տպաւորիչ է իր ցանկով եւ թուականներով: Տպաւորիչ է մանաւանդ իմանալը որ 1893-էն իսկ կանացի միութիւններ գոյութիւն ունեցած են ոչ միայն Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ, այլ նաեւ Թանթայի, Զակազիկի եւ Ասիութի մէջ: Ճիշդ է որ այդ միութիւններուն գործունէութիւնը ընդհանրապէս եղած է բարեսիրական՝ Գահիրէի Հայ Կարմիր Խաչ, Եգիպտահայ Կարմիր Խաչ, Հայ Աւետարանական Հոգեւոր Բարեսիրական Տիկնանց Միութիւն, Հայուհեաց Բարեսիրաց Միութիւն եւ այլն, բայց եղած են նաեւ ուսումի, մշակոյթի եւ գեղարուեստի նուիրուած միութիւններ, ինչպէս Ուսումնասէր Արմենուհեաց «Սանդուխտ» Ընկերութիւն, Արուեստասէր Օրիորդաց Միութիւն կամ

Գրասէր Օրիորդաց Միութիւն եւ այլն: Բաւական լայն ակնարկ նետուած է ՀԲԸՄիութեան վրայ. ներկայացուած են այնպիսի մանրամասնութիւններ, որոնք կրնան միութեան պարզ անդամներուն կամ ոեւէ հայու ուշադրութենէն վրիպած ըլլալ եւ կ'արժէ անոնցմէ մէկ քանին գոնէ այստեղ արձանագրել:

1906 Ապրիլին հիմնադրուած Միութիւնը իր կանոնագրէն օրինակ մը նախօրօք ղրկած է Եգիպտոսի այն օրերու ներքին գործոց նախարար Մուսթաֆա Ֆէհմին, 12 Ապրիլին, որուն պատասխանը ստացած է Մայիս 7-ին, որպէս կանոնագրի հաստատում եւ վաւերացում:

Կանոնագրին թիւ 1 յօդուածը կը բանաձեւէ Միութեան նպատակը.

«Արեւելքի (բնագաւառի) հայ ժողովրդեան մտաւոր եւ բարոյական զարգացման նպաստել, անոնց նիւթական (եւ տնտեսական) կացութիւնը բարւոքելու օժանդակել, եւ այս արդիւնքը յառաջ բերելու ծառայող որեւէ (ձեռնարկ կամ) հրատարակութիւն քաջալերել: Ընկերութիւնը (էապէս մարդասիրական է) բնաւ որեւէ քաղաքական հանգամանք չունի, սա պայման է»:

Կը տեսնենք որ Միութիւնը իր հիմնադրութենէն մինչեւ այսօր որոշ փոփոխութիւններ ունեցած է ոչ թէ կանոնագրին, այլ իր գործելու եղանակին մէջ, քայլ պահելով ժամանակի պահանջներուն եւ ըստ անոնց ծրագրելով իր յաջորդական քայլերը, ինչպէս օրինակ երիտասարդներուն, անոնց ուսումին եւ աշխատանքին տրուած մեծ կարեւորութիւնը, ուշադրութիւնը մշակութային հարցերու հանդէպ եւ այլն (young professionals, musical Armenia, GORIZ leadership, Generation next mentorship թուելու համար մէկ քանին):

Կ'իմանանք նաեւ որ 1912-ին Միութիւնը ունեցած է իր սեփական տպարանը Գահիրէի մէջ: Գահիրէի մասնաճիւղը, ի շարս այլ հրատարակութիւններու, Փոր Սայիտի գաղթականայնի դպրոցին աշակերտութեան համար 1918 թուականին հրատարակած է «Սիսուան Ընթերցարան»ը:

Կ'արժէ նաեւ արագ ակնարկ մը նետել



14 ԲԱՑԻԿՆԵՐ

1137 թուականին հիմնուած է կէպել վանքի վանականները (Փրովանսի շրջան, ֆրանսա), 1868 թուականին կը հիմնեն շոքոլայի գործարան մը, որ աւելի ուշ իր ճիւղերը կ'ունենայ Ալճերիոյ եւ Մարոգի մէջ:

1942 թուականին Մարոգի մէջ կը հիմնուի «Էկէպել Մարոգ» շոքոլայի գործարանը, որ յետոյ կը վերանուանուի Sherifian Company of Chocolate Factory եւ կը դադրի վանականներուն սեփականութիւնը ըլլալէ:

19րդ դարու վերջերուն ընկերութիւնը, շուկայական նկատումներով անշուշտ, կը սկսի շոքոլայի տուփերուն հետ դնել բացիկներ, որոնք կրնան հաւաքածոներ դառնալ, երբ շարքերը ամբողջանան:


Քանի մը տասնամեակ ետք բացիկները, որոնք նուիրուած էին ընդհանրապէս հոշակաւոր մարդոց դիմանկարներուն, կենդանիներու կամ այլ հետաքրքրական երեւոյթներու, մեծ ցնցում կը յառաջացնեն ժողովուրդին մօտ, որովհետեւ 1899 թուականին ընկերութիւնը կը սկսի հրատարակել բացիկներու նոր հաւաքածոյ մը, «Հայկական Կոտորածներ» խորագրով, նկա-



րագրելով 1895-1896 թուականներուն Օսմանեան պետութեան կողմէ հայերուն դէմ իրագործուած ջարդերը: Բացիկները կը նկարագրէին ոչ միայն հայերուն, այլ ընդհանրապէս բոլոր քրիստոնեաներուն դէմ կատարուող կոտորածները: Շարքը կը բաղկանայ 14 բացիկներէ, իւրաքանչիւրին վրայ բացատրութիւն մը՝ սպաննութիւններ թուրքերու եւ քիւրտերու կողմէ, ծովը թափուող մարմիններ կամ որպէս գերի վաճառուող մարդիկ:

Այդ թուականին բացիկներու այս շարքը World Exhibition in Paris-ի մեծագոյն մրցանակը ապահոված է գործարանին, որովհետեւ աշխարհին ներկայացուցած է բացայայտ ջարդ մը, զոր պետութիւնները կ'անտեսէին, քաղաքական նկատումներով:

Պատկերացուցէ՛ք որ նման գեղեցիկ, անմեղօրէն մարդկային բացիկներէ ետք, ուր երեւցած են Գահիրէն եւ Եգիպտոսը նաեւ, յանկարծ կ'երեւան մարդ արարածին անմարդկութիւնը հաստատող նման բացիկներ ...







«ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆ»

ՀԵՂԻՆԱԿ՝ ՊԵՐՃ ԹԵՐՁԵԱՆ

«Արեւ» օրաթերթի երկարամեայ և վաստակաւոր խմբագիր ողբացեալ Աւետիս Եափուճեանի ընտանիքը երբ կը ստանայ Եգիպտոսի ՀԲԸՄ-ի ցաւակցագիրը, իր զաւակը՝ Արեգ Եափուճեան յանուն ընտանիքին ղրկուած շնորհակալական նամակի մը մէջ կը գրէր. «Հայրիկս հակառակ որ վերջին 27 տարին անցուց Սիտնիի մէջ իր հարազատներուն հետ, սակայն ան միշտ կարօտով կը յիշէր Եգիպտոս իր ապրած 60 տարիները»:

Արեգ Եափուճեան նոյնպէս կը ղրկէր հօրը կցեալ գրութիւնը, հաւանաբար անոր ամենէն վերջինը: Ան անողոք հիւանդութեան պատճառով անցեալ Դեկտեմբերէն ասդին դադրած էր գրիչը ձեռք առնելէ և արտադրելէ:

Սոյն գրութիւնը գրախօսական մըն է նուիրուած «Տիգրան Պապիկեան» մենագրութեան, որուն հեղինակն է եգիպտահայ մտաւորական Պերճ Թէրզեան, որ ըստ ողբացեալին «պարտք զգացած է յարգանքի տուրք մատուցել Գալուստեան Ազգային Վարժարանի արժանաւոր տնօրէններու վերջին մոհիկանին»:

Ծ.Խ. Այս յօդուածը լոյս տեսած է Սիտնիի ՀԲԸՄ-ի մասնաճիւղի «Միութիւն» թերթին մէջ, 2017-ի Մարտին:

Պերճ Թերզեանը թողարկած է իր հերթական գրքոյկը, որ այս անգամ կը ներկայացնէ բացառիկ հանգամանք մը, որովհետեւ նուիրուած է պատկառելի վաստակով կրթական մշակի մը, յանձին Տիգրան Պապիկեանի:

Գալուստեան Ազգային վարժարանի ականաւոր տնօրէններու վերջին մոհիկանն էր Տիգրան Պապիկեան, որուն յաջորդները չունէին այն հմտութիւնն ու հեղինակութիւնը, որոնք եղան անոնց նախորդներուն յատկանիշները: Այս առնչութեամբ, Պերճ Թերզեան կը գրէ շատ իրաւամբ. «Եգիպտահայ հմուտ, նուիրեալ եւ վաստակաշատ դաստիարակ-տնօրէն Տիգրան Պապիկեան կեանքէն կը բաժնուէր վաղահաս մահով, իր ետին ձգելով հսկայ պարապ մը»:

Տիգրան Պապիկեան եղած է Պերճ Թերզեանի միայն մանկապարտէզի տնօրէնը, սակայն երբեք իր ուսուցիչը: Հակառակ այս իրողութեան, Պերճ Թերզեան խոր ակնածանքով կ'արտայայտուի անոր մասին: Պերճ Թերզեանի այս գրքոյկը, որ ընդամենը 64 էջերէ կը բաղկանայ, ծաւալով այնքան փոքր է, սակայն բովանդակութեամբ հսկայական տարողութիւն մը կը ներկայացնէ:



Տիգրան Պապիկեան

կայացնէ: Այն ինչ որ ըրած է Պերճ Թերզեան վաստակաշատ տնօրէն-դաստիարակին, անոր աշակերտները չեն ըրած, կամ աւելի ճիշդը՝ չեն կրցած ընել:

1925 թուականին Տիգրան Պապիկեան, չորս այլ դասընկերներու հետ, Ազգային Իշխանութեան որոշումով, Ֆրանսա կը ղրկուէր, որպէսզի բարձրագոյն ուսում ստա-



նայ: Իբրեւ տնօրէն, Տիգրան Պապիկեանէն եւ այնքան չեմ տպաւորուած, որքան որ տպաւորուած եմ անկէ որպէս ղաստիարակ-ուսուցիչ, որուն աշակերտը եղած եմ, երբ ան մեզի բուսաբանութիւն կը դասաւանդէր: Այն ինչ որ կը դասաւանդէր, կը բացատրէր այնպիսի հմտութեամբ, մանկավարժական այնպիսի փորձառութեամբ մը, որ աշակերտները, զէթ եւ անձնապէս, այլեւս կարիքը չէին ունենար տունը եւս սորվելու, որովհետեւ անոր դասաւանդած պահուն իսկ, ա՞ն ինչ արդէն իրենց դասը սորված կ'ըլլային: Տիգրան Պապիկեանան կրկնելի, անզուգական եւ եզակի դաստիարակ-ուսուցիչ մըն էր:

Այդ կը հաստատէ նաեւ Պերճ Թերզեան, երբ կը գրէ. «Դաստիարակ մըն էր բռնին ամբողջական առումով:»

Եթէ Տիգրան Պապիկեան Ֆրանսա մնացած ըլլար, հաւանաբար Փարիզի Սորպոն համալսարանին մէջ դասախօս-փրոֆեսոր մը կ'ըլլար փարթամ աշխատավարձով մը: Սակայն ան արհամարհեց փառքն ու հարստութիւնը, եւ վերադառնալով Եգիպտոս, ինքզինք նուիրաբերեց իր բազմաչարչար ժողովուրդին զաւակներուն հայեցի դաստիարակութեան սրբազան առաքելութեան: Եւ պէտք է հաստատել Պերճ Թերզեանի կատարած հարազատ ներբողականը, թէ «Անզիջող էր աշակերտութեան տոհմիկ եւ հայեցի դաստիարակութիւն ջամբելու հարցին մէջ: Այս մասին իր արտայայտութիւնները լեզուի տուրք չէին, այլ գործնապէս կիրարկուող մեթոտներ:»

1974 Մայիսին, «Գահիրէի Ազգային Իշխանութեան կազմակերպութեամբ, հրապարակային հանդիսութեամբ մը, արժանավայել կերպով նշուեցաւ իր կրթական քառասնամեայ գործունէութեան յոբելեանը»: Յոբելեանական այս հանդիսութեան օրերուն, եւ Հայաստան կը գտնուէի, հայ ժողովուրդի պատմութեան զծով աւարտաճառ պաշտպանելու համար: Այդ օրերուն էր, երբ «Հայրենիքի Ձայն» շաբաթաթերթի խմբագիրը զիս իր մօտ հրաւիրեց եւ հաղորդեց թէ Տիգրան Պապիկեանի յոբելեանը պիտի տօնակատարուի Գահիրէի մէջ, եւ խնդրեց ինձմէ որ այդ առնչութեամբ յօդուած մը գրեմ: Գրեցի այդ յօդուածը, որ «Հայրենիքի Ձայն» շաբաթաթերթին

մէջ լոյս տեսելէ ետք, արտատպուեցաւ Գահիրէի «Արեւ» օրաթերթին մէջ: Ուստի, յարմար էր որ այդ յօդուածս ներառուէր այս գրքոյկին մէջ, քանի որ ան կը վերաբերէր Տիգրան Պապիկեանի յոբելեանին:

Տիգրան Պապիկեան որպէս տնօրէն յաջորդեց այլ ականաւոր տնօրէնի մը՝ Լեւոն Թաշճեանին, այս վերջնոյն անակնկալ մահէն ետք, 1942 թուականին: Այդ տարին, մարզանքի դասին մասնակցելու համար, երբ ներքնաշապիկով եւ կարճ տաբատով դաշտ իջայ, ծանր պաղառութենէ մը բռնուելով, ամբողջ երեք ամիս հիւանդ պառկեցայ: Երբ ապաքինեցայ, մօրս հետ դպրոց գացի, երբ Լեւոն Թաշճեանը այլեւս չկար: Ներկայացայ տնօրէնութեան: Երբ տեսչարանէն ներս մտանք, տեսայ որ Տիգրան Պապիկեանը տնօրէնի սեղանին քովընտի նստած կ'աշխատէր: Թէեւ ան պիտի յաջորդէր Լեւոն Թաշճեանին, սակայն, քանի որ տակաւին նշանակումը չէր եկած, չէր գրուած տնօրէնի աթոռը: Այդ տեսարանը խորապէս տպաւորեց զիս, հակառակ որ 12 տարեկան երեխայ մըն էի, եւ մինչեւ այսօր այդ տեսարանը աչքերուս առջեւ պարզուած կը մնայ:

Տիգրան Պապիկեանի մահէն ետք, շիրիմի մը կառուցման հարցը ծագած էր: Պերճ Թերզեան այդ առնչութեամբ կը գրէ. «Տիգրան Պապիկեանի մահէն ետք, Գահիրէի Ազգային Իշխանութիւնը, իբր յետմահու նուազագոյն յարգանքի արտայայտութիւն, ձեռնարկեց շիրիմի մը կառուցման աշխատանքներուն: Սակայն, դժբախտաբար, յանգուցեալին ընտանիքը, ցարդ անհասկնալի պատճառներով, արգելք հանդիսացաւ այս ձեռնարկին:»



Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանը



ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Ուրբաթ, 14 Յուլիսին սկսաւ 2017ի ե-գիպտահայ պասքէթ-պոլի մրցաշարքերուն անդրանիկը, Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խաղերով, հովանաւորութեամբ Եգիպտոսի Հայոց Թեմին Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի և նախագահութեամբ Տէր և Տիկին Նուպար Սիմոնեանի, ատենապետ Գահիրէի Պատկառելի Թեմական ժողովին:

Առաջին մրցումը ՀՄԸՄ Կամքին և հիւրընկալ ակումբի խումբերուն միջեւ էր: Մքանչանքի արժանի է Աղեքսանդրիոյ այս երկու մարզական ակումբներուն անբեկանելի կամքը, պասքէթ-պոլի երէց տղոց խումբեր պահելու, հակառակ դժուարութիւններուն: Անոնց համար բաժակի տիրանալը առաջնահեթ չէ այնքան, որքան ակումբներուն աւանդական ձեռնակները անխափան պահելը, որ ինքնին մեծ յաղթանակ է:

Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց մակարդակը ՀՄԸՄ Կամքի տղոցմէ աւելի բարձր ըլլալուն, անոնք յաղթական հանդիսացան 56-36 արդիւնքով ու անմիջապէս անցան Կիրակի օրուան աւարտական մրցումին:

Օրուան երկրորդ մրցումը Գահիրէէն ՀՄԸՄ Արարատին եւ Սրբ. Թերեզայի խումբերուն միջեւ էր: Այս տարի Արարատի խումբը կը բաղկանար միայն պատանի ու երիտասարդ մարզիկներէ, ուստի անոնց խաղարկութիւնը շատ արագ էր ու ներդաշնակ, ի տարբերութիւն Սրբ. Թերեզայի խումբին, որ կը տառապէր անկազմակերպութենէ ու շփոթութենէ: Մի քանի փոքր, սակայն անտեղի ջղային երեւոյթներէ ետք, Արարատի խումբը դիւրին յաղթանակ մը տարաւ, 61-39 արդիւնքով:

Շաբաթ, 15 Յուլիսին միայն մէկ մրցում տեղի ունեցաւ, ամենէն սպասուածը՝ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն և ՀՄԸՄ Արա-

րատին միջեւ: Գահիրէէն խումբերուն ընկերակցող համակիրները, ճոխ բազմութեամբ մը գրաւած էին հանդիսատեսներուն աթոռները:

Դժուար էր Արարատի դեռատի մարզիկներուն վիճակը, ի տես Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ երիտասարդ ու փորձառու մարզիկներուն, որոնցմէ իւրաքանչիւրը բարձրորակ խաղարկութիւն կը ցուցաբերէր:

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը տիրապետեցին խաղին սկիզբէն մինչեւ վերջ, թէպէտ Արարատի խաղացողներէն մի քանին, 3 թիւի արձակումներով եւ իրերայաջորդ արագ յարձակումներով թիւի տարբերութիւնը կարողացան 10ի նուազեցնել, յոյսի նշոյլ մը պարգեւելով իրենց համակիրներուն, սակայն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը շուտով ջլատեցին զայն եւ մրցումը վերջացուցին ի նպաստ իրենց, 72-49 արդիւնքով:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս հիւրընկալ ակումբին վարչութիւնն ու Տիկնանցի անդամուհիները Royal Night պարանցիկ երեկոյ մը կազմակերպած էին Club Syrienի մէջ: Գահիրէի երիտասարդները միանալով Աղեքսանդրիոյ երիտասարդներուն, շէնցուցին մթնոլորտը իրենց աշխոյժ հայկական շուրջպարերով:

Իսկապէս որ յաջող երեկոյ մըն էր. սրահին ճաշակաւոր զարդարանքը, համեղ ուտելիքներն ու DJ Այգին երաժշտութիւնը կը գերազանցէին զիրար:

Կիրակի օրուան աւարտական մրցումը երկու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻներուն միջեւ էր: Նախքան մրցումին սկսիլը, Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն երկարամեայ ու նուիրեալ ատենապետ Կարպիս Թօսունեան խօսք առաւ ու շնորհակալութիւն յայտնեց այն ակումբներուն, որոնք մասնակցած էին մրցաշարքին, եւ բոլոր անոնց, որոնք օժանդակած էին մրցաշար-



քին, յատկապէս Տէր և Տիկին Վարդ Ալեքսանեանին, որոնք ամէն մրցաշարքերուն մէտայլները կը նուիրեն:

Երկու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐներուն միջեւ մրցումները միշտ հաշտ ու հանդարտ կ'ընթանան: Փորձառու մարզիկներով սկսաւ Գահիրէի խումբին մարզիչը ու հետզհետէ փոխարինեց զանոնք պատանիներով ու նորեկներով: Աղեքսանդրիոյ մարզիկները, իրենց կարողութեան սահմաններուն մէջ, լաւ խաղարկութիւն ցուցաբերեցին. խաղը երբեմն իրապէս հետաքրքրական էր:

Երբ մրցումը աւարտելու իրաւարարին սուլիչը հնչեց, արդիւնքը 72-61 էր, ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐին: Մրցաշարքին բաժակը, որ նուիրուած էր Տիկին Անի Արթինեանի ու զաւակներուն՝

Օր. Դանիայի եւ Տոքթ. Վահէի կողմէ, ի յիշատակ իրենց ծնողած ու մեծ ծնողաց ողբ. Յակոբ և Զապէլ Տիշչէքէնեաններու և ողբ. Սիրվարդ Արթինեանի, ստացաւ խմբապետ Արմէն Վարժապետեանը:

Վարձքը կատար Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի խումբին երկարամեայ պատասխանատու Յակոբ Գարակէօզեանին եւ օգնական Քրիս Սիմոնեանին, նաեւ, աւագ մարզիչ Ամր Աշուրին և օգնական Ալլաա Զահրանին այս յաղթանակին համար:

Վարձքը կատար Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի Վարչութեան եւ Տիկնանց Յանձնախումբին, յաջող մրցաշարք մը կազմակերպելու համար:

Սօսի Ներետեան-Յակոբեան





«ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆ»

Իրականութիւնը այս է: Տիգրան Պապիկեանի աշակերտներէն եւ իմ դասընկերներէս Վահան Չեչճենեանը հանգանակութեան մը ձեռնարկեց անոր աշակերտներուն մօտ, որպէսզի Տիգրան Պապիկեանի գերեզմանին վրայ շիրիմ մը կառուցուի, սակայն անոր այրին կտրականապէս ընդդիմացաւ անոր, թէ «եթէ ուզեմ, ես կրնամ շիրիմ մը կառուցել տալ...»: Արդ, ճիշդ է որ վահան Չեչճենեանը այդ ժամանակին Գահիրէի Քաղաքական ժողովին Ատենապետն էր, սակայն իր այդ նախաձեռնութեան դիմած էր ոչ թէ իր հանգամանքով, հետեւաբար, ճիշդ չէ որ Ազգային Իշխանութիւնն էր որ ծրագրած էր գերեզմանին վրայ շիրիմ մը կառուցել:

Երկու նկատողութիւն ունիմ գրքոյկին մէջ սպրդած սխալներուն առնչութեամբ: Տիկին Իսկուհի Տատրեանին մասին գրուած է, թէ ան շրջան մը Գալուստեան Ազգային վարժարանին տնօրէնուհի եղած էր: Սակայն անկէ ետք, նաեւ Կիպրոսի Մելգոնեան Կրթական հաստատութեան աղջկանց բաժնի տեսչուհին եղած էր: Ա-

յա, Յովակիմեան Սանուց Յանձնախումբին մէջ անդամ էր նաեւ Յովակիմեան հաստատութեան Տնօրէնը Աբիկ Տատեան, եւ ոչ թէ «Աբէլ Տատեան»: Ես Յովակիմեան հաստատութեան մօտ ամբողջ 15 տարի պաշտօնավարած ըլլալով, մօտէն ծանօթեմ այդ անձին:

Պերճ Թերզեանի այս աշխատասիրութիւնը, զոր ինք համեստօրէն ըսած է «համադրեց», մեծապէս շնորհակալ աշխատանք մըն է, որով ան յաւերժութեան հոգածութեան կը յանձնէ վաստակաշատ Տնօրէն-Դաստիարակ Տիգրան Պապիկեանը, որ եղած է հազարաւոր աշակերտներու հայեցի դաստիարակութեան նուիրուած առաքեալ մը: Վարձքը կատար Պերճ Թերզեանին, որ այսօր Տիգրան Պապիկեանի հազարաւոր աշակերտները, իրենց տնօրէն-դաստիարակին յիշատակովը առջուն պահեր պիտի ապրին:

*Աւերիս Եափուճեան
19 Մարտի 2017, Աւստրալիա
«ՄԻՈՒԹԻՒՆ»*

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Եգիպտահայ մամուլին նուիրուած ցանկին վրայ, որ կը գրաւէ հատորին մեծադիր երեք էջերը եւ ներկայացուած է ըստ վայրի եւ ժամանակագրութեան:

Առաջին պարբերաբերթը որ կը յիշուի «Արմաւենի» կը կոչուի եւ լոյս տեսած է 1865 թուականին, այսինքն մեր մամուլի պատմութեան առաջին թերթէն՝ «Ազդարար»էն (Մատրաս, Հնդկաստան, 1794) միայն 71տարիներ ետք:

Մինչեւ 2013 թուական, Գահիրէի մէջ միայն, մամուլը կը հաշուէ 118 անուն, թերթ, պարբերաբերթ, ամսագիր թէ տարեգիրք, որոնք երբեմն այնքան հետաքրքրական անուններ ունեցեր են, ինչպէս՝ Պիծակ, Նշդրակ, Աւել, Մալէշ, Խառաշօ, Մժղուկ, Նոր Խիկար, Եհովա, Մամուր եւ այլն: Յստակ է որ ասոնք ընդհանրապէս երգիծական բնոյթի հրատարակութիւններ են, ինչ որ կը հաստատէ

հայերու բնածին երգիծանքին գոյատեւումը, հակառակ այնքան դժխեմ պայմաններուն:

«Հայկական Համայնքային Կառոյցները Եգիպտոսի Մէջ» հատորը յաւելում մըն է տոքթ. Սուրէն Պայրամեանի երկին եւ շնորհակալ աշխատանք մը՝ վաւերագրութիւնը մեծ եւ հարուստ պատմութիւն ունեցող գաղութի մը: Այս գիրքը կարելոր ներդրում է Սփիւռքի պատմութեան համար: Կարելոր է նաեւ գրադարանին իւրաքանչիւր անհատի, որուն համար մեր պատմութիւնը, Հայաստանի թէ Սփիւռքի մէջ, էական մասն է մեր գոյութեան: Ի վերջոյ աղբիւր մը բոլոր անոնց, որոնք կ'ուզեն խորամուխ ըլլալ այս գաղութին պատմութեան մէջ:

*Մ. Երամեան
Յունիս, Հելիոպոլիս-Գահիրէ*



Տպատրուփիններ Եգիպտահայ Գաղութի Մասին

ՊԵՏՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ

Յունիս ամսուան ընթացքին, առիթը ունեցանք այցելելու Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրէն ու աւելի մօտէն ծանօթանալու տեղի հայկական գաղութին, որ ունեցած է յիշատակելի եւ պատուական անցեալ մը:

Եգիպտահայ գաղութը կը նկատուի Միջին Արեւելքի հնագոյն եւ կարեւորագոյն հայկական գաղութներէն մէկը, որ արդէն լաւապէս կազմակերպուած էր Մեծ Եղեռնի նախօրեակին եւ իր նպաստներով ձեռք երկարած նոր կազմակերպուող իր քոյր գաղութներուն:

Օրինակներով խօսելու համար, կ'արժէ յիշել թէ 1906-ին Գահիրէի մէջ է որ կը հիմնուի Սփիւռքի գլխաւոր կազմակերպութիւններէն՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, որ մեծապէս կը նպաստէ 1909-ի Կիլիկիոյ Աղէտէն տառապած հայ ժողովուրդի զաւակներուն: Նոյնպէս, Գահիրէի մէջ է որ կեանքի կը կոչուի ատենի հայկական քաղաքական կարեւոր կազմակերպութիւններէն՝ Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութիւնը 1908-ին: Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը կը հիմնուի Գահիրէի մէջ 1928-ին ու ապա կ'անցնի Լիբանան:

Այս բոլորին կողքին, եգիպտահայ գաղութը ունեցած է յիշատակելի դէմքերու շատ երկար շարք մը: Պատմութիւնը ասպարէզ ընտրած ըլլալով, մեծ հրճուանք էր այցելել այս մեծ դէմքերէն երկուքին շիրիմները, որոնք արժանի են ամէն յարգանքի:

Եգիպտահայ երեւելի դէմքերէն ոմանք ուղղակիօրէն մեծ ազդեցութիւն ունեցած են լիբանանահայ գաղութին կազմաւորման գործընթացին վրայ: Օրինակի համար, 1931-ին Միհրան Տամատեան եւ Ճանիկ Չաքըր, այլ ազգայիններու կողքին կը դառնան Պէյրութի մէջ կազմաւորուող Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան հիմնադիրներէն: 1937-ին, Պէյրութի «Զարթօնք» օրաթերթը կը հիմնուի նաեւ Միհրան Տամատեանի ջանքերով:

Վերոյիշեալները մէկ փոքր մասն են Եգիպտահայ գաղութի անցեալին, սակայն պիտի բաւարարուինք այսքանով ու սկսինք խօսիլ անոր ներկային մասին:

Ներկայիս Գահիրէի Հելիոպոլիս կոչուող արուարձանը կը նկատուի եգիպտահայութեան սիրտը: Այդ շրջանը եղաւ մեր այցելութեան գլխաւոր վայրը: Հելիոպոլիսը հիմնուած է պելճիքացի Պարոն էմիլէնի եւ եգիպտահայ Պօղոս Նուպար Փաշայի կողմէ: Հոն մինչեւ օրս կը հանդիպինք անոնց շքեղ պալատներուն: Անցեալին եղած են նաեւ մեծ թիով հայեր Զակազիկի եւ Աղեքսանդրիոյ մէջ, սակայն առաջինին մէջ ներկայիս հայկական գաղութ գոյութիւն չունի, իսկ վերջինիս հայութեան թիւը նուազած է:

Հելիոպոլիսի մէջ հաստատուած են հայկական զանազան մարզական ակումբներն ու մշակութային միութիւնները: Հոն կը գտնուի ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի կեդրոնատեղին, ՀԲԸՄ-ի Չաքըր Մշակութային Կեդրոնը, ինչպէս նաեւ Բարեգործականի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզական թելը: Այդ շրջանին մէջ կը գտնուին նաեւ ՀՄԸՄ-Արարատը, «Կոկանեան» Սրահը: Եգիպտահայ գաղութը կը շարունակէ ունենալ իր զանազան թերթերը, ինչպէս «Արեւ»ը, «Ջահակիր»ը, «Յուսաբեր»ը, «Տեղեկատու»ն եւ «Արեգ»ը:

Գահիրէի կեդրոնը կը գործէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, ինչպէս եւ Ազգային Առաջնորդարանը, որ գոյութիւն ունեցած է Օսմանեան ժամա նակաշրջանէն: Առաջնորդարանը կարեւոր դեր կը խաղայ հայ երիտասարդներուն, ինչպէս նաեւ կարիքաւորներուն նպաստելու գործընթացին մէջ: Ան կրթանպաստներ տալով, առիթը կ'ընծայէ հայ ուսանողներուն, որպէսզի կարենան իրենց բարձրագոյն ուսումը ստանալ երկրի տարբեր համալսարաններէն ներս:

Լիբանանահայ նման կազմակերպութիւններ նուազ ջանք կը թափեն այս առնչութեամբ, հետեւաբար լիբանանահայ երիտասարդները կը դիմագրաւեն բազմաթիւ դժուարութիւններ, իրենց բարձրագոյն ուսումը ստանալու ճամբուն վրայ:

Առաջնորդարանի հովանիին տակ կը գործէ նաեւ Ազգային Նուպարեան-Գալուստեան վարժարանը (անցեալին երկու անջատ վարժարաններ), որ ձրիաբար կ'ընդունի հայ աշակերտներ: Միեւնոյն ժամանակ, այս վարժարանը կը մէկտեղէ գաղափարական տարբեր հակումներ ունեցող ընտանիքներու զա-



լակները եւ այս ձեւով վարժարանը կարելու էր կը խաղայ եգիպտահայոց համախոհութեան եւ համերաշխութեան մէջ: Փափաքելի է որ լիբանահայ գաղութն ալ ազդուի այս երեւոյթէն:

Ի տարբերութիւն լիբանահայ գաղութին, եգիպտահայութիւնը աւելի եւս համարկուած է տեղի արաբական/իսլամական միջավայրին հետ: Օրինակի համար, Ռամատանի տօնին առթիւ ՀՄԸՄ- Արարատ ակումբը կազմակերպած էր «իֆթար» մը, ի պատիւ եգիպտացի բարձրաստիճան հիւրերու եւ լրագրողներու:

Հակառակ իր ունեցած բոլոր հպարտալի եւ պանծալի երեւոյթներուն, համեստութիւնը, ազնուութիւնը եւ պարկեշտութիւնը եգիպտահայութեան գլխաւոր իւրայատկութիւններէն են:

Հելիոպոլիս կեցութեան ընթացքին, հանդիպումներ ունեցանք եգիպտահայ գաղութի ղեկավար դէմքերուն հետ, ինչպէս տեսարք Պերճ Թերզեանի, Օննիկ Պըլըքտանեանի, Տոքթ. Վիգէն ճիզմէճեանի, եւ անոնց ազնի տիկիններուն: Այցելութիւն մը տուինք եգիպտահայ մեծանուն ու նշանաւոր երգիծանկարիչ Ալեքսանտր Սարուխանի ընտանիքին, որ նոյնպէս կը բնակի Հելիոպոլիս: Այդտեղ ապրեցանք յիշատակելի պահեր եւ ունեցանք անբացատրելի զգացումներ, տեսնելով Սարուխանի գեղարուեստական գործերը կախուած տան պատերէն, որ կենդանի կը պահէր Սարուխանը թէեւ 40 տարիներ անցած են անոր մահէն:

Եգիպտահայ գաղութը ունի նաեւ խոստմնալից երիտասարդ ուժեր: Անոնցմէ մէկն է Միացեալ Թագաւորութեան Օքսֆորտ Համալսարանի շրջանաւարտ եգիպտաբան Դոկտ. Արթո Պըլըքտանեանը, որուն առաջնորդու-

թեամբ եւ ընկերակցութեամբ այցելեցինք Կիզայի հրաշալի բուրգերը, ինչպէս նաեւ Եգիպտոսի Ազգային Թանգարանը, ուր ծանօթացանք Եգիպտոսի հեռաւոր անցեալին: Դոկտ. Պըլըքտանեանի շնորհիւ Փառաւոնական Եգիպտոսի մասին ընկալեցինք բազմաթիւ հետաքրքրական գիտելիքներ:

Այդ օրերուն Եգիպտոս էր նաեւ Լիբանանէն Դոկտ. Անդրանիկ Տագէսեանը, որ Բարեգործականի Չաքըր Մշակութային Կեդրոնէն ներս զրոյց մը վարեց «Հայկական Ինքնութեան» մասին: Իր շահեկան «բազմախօսութիւն»ը խորապէս հետաքրքրեց եգիպտահայ գաղութի անդամները:

Հայկական այլ գաղութներու նման, ներկայիս Եգիպտահայ գաղութն ալ կը դիմագրաւէ իր գոյութիւնը պահելու դժուարութիւններ:

Եգիպտոսի մէջ տեղի ունեցած քաղաքական անցուդարձերը դարձեալ կը վտանգեն գաղութի գոյութիւնը: Օրինակի համար 2011-ի եգիպտական յեղափոխութենէն ետք որոշ թիւով հայեր ձգած են երկիրը, երբ իսլամիստները իշխանութեան գլուխ անցան նախագահ Մըրսիի ժամանակաշրջանին: Իր կարգին հայերու թիւի նուազումը կը վտանգէ գաղութի կալուածները, որովհետեւ պետութիւնը իրաւասութիւն կ'ունենայ իր ձեռքը երկարելու եգիպտահայոց Առաջնորդարանի կալուածներուն վրայ:

Կը թուի թէ Եգիպտահայ գաղութը կ'ուղղուի դէպի անորոշ ապագայ:

Այս այցելութիւնը առիթը ընծայեց տեսնելու Եգիպտոսի տեսարժան վայրերը, ինչպէս նաեւ մօտէն շփուելու եգիպտահայ գաղութին հետ ու ծանօթանալու անոր ապրելաձեւին եւ դիմագրաւած դժուարութիւններուն:



Գահիրե, 10 Օգոստոս 2017

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**ՄԱՀ ԵՒ ՑՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԳԱ-
ՀԻՐԷԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵ-
ՂԵՑԻՈՑ ԲԱՐԵՇՆՈՐՀ ՊՕՂՈՍ-ՕՆՆԻԿ
ԱՌԱԳ ՍԱՐԿԱԿԱԳ ՊՕՂՈՍԵԱՆԻ**

4 Օգոստոս 2017-ին ի Տէր հանգեալ Գ-ա-
հիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ եր-
կարամեայ սպասաւոր Բարեշնորհ Պօղոս-
Օննիկ Աւագ Սարկաւագ Պօղոսեանը:

5 Օգոստոս 2017-ին կէսօրէն վերջ ժամը 3-
ին Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկե-
ղեցոյ մէջ տեղի ունեցաւ ննջեցեալի յուղար-
կատրութեան ծիսակատարութիւնը,
հանդիսապետութեամբ Գահիրէի Առաջնոր-
դական Փոխանորդ Հոգեշնորհ Տ. Գաբրիէլ
Վարդապետ Սարգսեանի եւ մասնակցութե-
ամբ Աղեքսանդրիոյ Կաթափկէ Հայոց Առաջ-
նորդ Գերապայծառ Տ. Գրիգոր Օգոստինոս
Եպիսկոպոս Գուսանի ու ներկայութեամբ
Ղատի Ուղղափառ քոյր եկեղեցոյ ներկայա-
ցուցիչներու:

Վերջին հրաժեշտի արարողութեան ներ-
կայ էին նաեւ Թեմական ժողովի, եկեղեցոյ
Հոգաբարձութեան անդամներ, ինչպէս նաեւ
մշակութային, մարզական ու բարեսիրական
միութիւններու եւ կազմակերպութիւններու
վարչականներ եւ սգակիր հոծ բազմութիւն
մը:

Հայր Սուրբը իր խօսքին մէջ անդրադար-
ձաւ ննջեցեալի եկեղեցական գործունէութե-
անը եւ կենսագրութեանը. ան ծնած է 12 Ապ-
րիլ 1934-ին, Գահիրէ, Եգիպտոս: Որդին է
Գարեգին Սէլէճեանի (Պօղոսեան) եւ Հռիփ-
սիմէ (Սիմա) Կարապետեանի: 9 տարեկանէն
անոր մայրը վախճանած է: Յաճախած է Գա-
լուստեան Ազգային վարժարանի մանկա-
պարտէզը եւ շարունակած մինչեւ նախակր-
թարանի աւարտական բաժինը: Այնուհետեւ
ուսումը շարունակած է Տոն Պոսկօ Իտալա-
կան ուսումնարանին մէջ երկաթագործութե-
ան բաժինը: Աւարտելէ վերջ, ոսկերչութիւն
սորված է:

Եկեղեցոյ հետ Պօղոս-Օննիկ Պօղոսեանի
կապը սկսած է դեռ մանուկ հասակէն. Եգիպ-
տոսի Հայոց Թեմի նախկին Առաջնորդ Հոգե-
լոյս Մամբրէ Արքեպիսկոպոս Սիրունեանի
եղբօր թելսդրանքով՝ հինգ տարեկանէն
ներկայ գտնուած է ժամերգութիւններու եւ ա-
պա ստացած է դպրութեան աստիճանը:

Տարիներ յետոյ, 1975-ի Դեկտեմբերին,
ձեռնադրուած է սարկաւագ, ձեռամբ Եգիպ-
տոսի Հայոց Թեմի նախկին Առաջնորդ Հոգե-
լոյս Զաւէն Արքեպիսկոպոս Չինչինեանի, իսկ

այնուհետեւ՝ երկարամեայ ծառայութեան դի-
մաց անոր շնորհուած է նաեւ աւագութեան
աստիճան:

Հոգշ. Հայր Սուրբը ապա մէջ բերաւ
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն
Հայոց Կաթողիկոսի շնորհած Ս. Ներսէս
Շնորհալի պատուոյ բարձր շքանշանի կոն-
դակէն մաս մը, ուր ըսուած է. «Գոհունակու-
թիւն է Հայրապետիս համար, որ Դուք տաս-
նամեակներ շարունակ նախանձախնդրօրէն
ներդնում էք Ձեր ջանքերը, որպէսզի Գահի-
րէի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում
կանոնատրապէս ե վայելչութեամբ կատարու-
են ծիսական արարողութիւնները ե նրա հո-
վանու ներքոյ միշտ աշխոյժ ու բարի գործե-
րով իմաստատրուած լինի համայնքային կե-
անքը»:

Ապա Հայր Գաբրիէլը եկեղեցական ան-
դաստանի մէջ նկարագրեց հանգուցեալ բա-
րեշնորհ Աւագ Սարկաւագի գործունէութիւ-
նը՝ կարեւորելով անոր պարտաճանաչու-
թիւնն ու պատասխանատուութիւնը, պար-
տականութեան հանդէպ անոր բարձր գի-
տակցութիւնը ինչպէս նաեւ հաւատարմու-
թիւնն ու բարութիւնը, որոնք ցուցաբերած է
իր կեանքի ամբողջ ընթացքին, եւ իր խօսքի
վերջաւորութեան մէջ բերաւ Աւետարանա-
կան արտայայտութիւնը. «Բարի եւ հաւատա-
րիմ ծառայ մտի՛ր քո Տիրոջ ուրախութեան
մէջ»:

Հայր Սուրբը ննջեցեալի զաւակներուն
ցաւակցութիւն յայտնեց Եգիպտոսի Հայոց
Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Աշոտ Եպիս-
կոպոս Մնացականեանի, նաեւ Գահիրէի եւ
Աղեքսանդրիոյ հոգեւոր դասի, Թեմական եւ
Քաղաքական ժողովներու պատուարժան ա-
տենապետերու, ինչպէս նաեւ Եգիպտոսի
մօտ Հ.Հ. Դեսպան Ն.Գ. Դոկտ. Արմեն Սելքո-
նեանի անունով:

Ապա Գերապայծառ Տէր Գրիգոր Օգոստի-
նոս Եպիսկոպոս Գուսան մխիթարական
խօսք ըսաւ արաբերէնով:

Թաղումի կարգը շարունակուեցաւ Հելիո-
պոլսոյ Ամենայն Սրբոց Ազգային գերեզմա-
նատունը, ուր հանգուցեալին մարմինը ա-
մփոփուեցաւ ընտանեկան դամբարանին
մէջ:

Խունկ եւ աղօթք ննջեցեալ Բարեշնորհ
Պօղոս-Օննիկ Աւագ Սարկաւագ Պօղոսեանի
Հոգիին:

ԴԻԻԱՆ

ԳԱՀԻՐԷԻ ԱԶԳԱՑԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱ-
ՆԻ



